

ՎԱՆԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ



**ՀԱՅՈՑ ԼԻՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

ՀԱՅՈՑ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

(Ակնարկներ հայոց հին պատմության)

4242

Խաչատրյան Վալերի

Խ 282 Հայոց հին պատմության հարցեր. – Եր.: «Նաիրի», 2010, 40 էջ:

Վ. Խաչատրյանը սեպագիր արձանագրությունների ուսումնասիրությամբ հրատարակել է Փոքր Ասիայի Խեթական (մ.թ.ա. 17-13-րդ դդ.) և Հայկական լեռնաշխարհի Հայասա (մ.թ.ա. 15-13-րդ դդ.) պետությունների քաղաքական պատմության, աշխարհագրության, ազգաբնակչության և այլ հարցերի միջոցով մի շարք աշխատություններ: Հեղինակը սեպագիր և հայ մատենագրությամբ վկայված աղբյուրների համեմատական վերլուծությամբ աշխատել է վերականգնել հայոց հին պատմությունը («Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում», Եր., 1998):

Ներկա աշխատանքում քննվում են հայոց հին պատմության որոշ վիճահարույց հարցեր:

Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում:

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Սույն աշխատանքում փորձում ենք լուսաբանել հայոց հին պատմության՝ մ.թ.ա. 14-1-ին դարերին վերաբերող որոշ խնդիրներ: Մեր կողմից հրատարակված աշխատություններում արդեն քննության ենք առել մ.թ.ա. 14-6-րդ դարերի հայոց հին պատմությունը: Սակայն այսօր անհրաժեշտ ենք համարում այդ ժամանակաշրջանի չլուսաբանված, կնճռոտ հարցերը կրկին պարզաբանել՝ որոշ լրացումներով: Իսկ մ.թ.ա. 6-1-ին դարերին երբևէ չենք անդրադարձել:

Խեթական սեպագիր տեքստերում (մ.թ.ա. 14-13-րդ դարեր) հիշատակվող Հայասա և Ազի վարչաքաղաքական տարածքների տեղադրության վերաբերյալ դատողությունները հայ պատմագիտության մեջ առ այսօր հաճախ հենվում են Ի. Դյակոնովի առաջ քաշած տեսակետին: Ըստ նրա՝ դրանք տարբեր քաղաքական միավորներ են եղել, որոնք զբաղեցրել են երկու հարևան գետերի ավազանները: Ընդ որում, Ազին ընդգրկել է ժամանակակից Խարշիտի (Տրապիզոնի շրջանից անմիջապես հարավ-արևմուտք), իսկ Հայասան՝ Ղորոխի ավազանները (9, էջ 81-82):

Հեղինակը Ազիի աշխարհագրական դիրքը որոշելու համար վկայակոչում է խեթական քազավոր Մուրսիլիս 2-րդի տարեգրության այն հատվածը, որտեղ գրված է՝ aš-ši-ma-kán^ա A-ri-ip-ša-aš [ŠA A.A]B.BA ki-it-ta-ri: Այս պարբերության շումերերեն A.AB.BA գաղափարագիրը Ի. Դյակոնովը քարգմանում է «ծով» և եզրակացնում, որ Ազիի Արիպսա քաղաքը ծովի ափին է գտնվել: Իսկ Ա. Դյակոնովի բառարանում այդ շումերերեն բառն ունի նաև «ջրափոս, ջրավազան, լիճ» իմաստները (տե՛ս 1): Որոշելու համար, թե դրանցից որն է տվյալ դեպքում նախընտրելի քարգմանության մեջ, դիմենք այլ փաստերի:

Մուրսիլիս 2-րդի այդ նույն վավերագրից պարզ է դառնում, որ նա Ազի է գնացել, կարելի է ասել, «երկրորդ ճանապարհով»: Թագավորը, հասնելով Ինգալավա քաղաք, զորատես է արել, այնուհետև հարձակվել Արիպսայի վրա (14, էջ 133-139): Եթե նկատի ունենանք, որ Ինգալավան հայկական միջնադարյան աղբյուրներում հիշատակվող՝ Ղորոխի ստո-

լի ինտիմ Նիզալ գավառի համանուն կենտրոնն է, ապա հասկանալի է դառնում, որ խեթական թագավորի «երկրորդ ճանապարհը» անցել է Սև ծովի հարավային ափով: Դրանով նա հասել է Ճորոխի գետաբերան, բերվել դեպի հարավ ու մտել Ինգալավա և հարձակվել Արիպսա քաղաքի վրա: Այստեղից հետևում է, որ հնադարյան Արիպսան գտնվել է ոչ թե Սև ծովի հարավային ափին, այլ Ճորոխի հովտում: Ուրեմն վերը բերված տեքստը պետք է թարգմանել՝ «Իսկ հիշված Արիպսան ընկած է եղել Գրավազանի մեջ», այսինքն՝ այն շրջապատված էր ջրով: Հին աշխարհում շատ տարածված էր ինքնապաշտպանական նպատակներով բնակատեղիները ջրանցքներով շրջափակելը:

Խեթական տեքստերում վկայություններ կան Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածի, բացառությամբ վերին Տիգրիսի ավազանի, հինգ վարչաքաղաքական միավորների մասին: Դրանցից Ազին (^{KUR}Azi) զբաղեցրել է Ճորոխի հովիտը, «Բարձր» երկիրը (^{KUR}^{URU}UGU-TI)՝ վերին Եփրատի ավազանը (ոլորանից մինչև Երզրում ներառյալ), Իսուվան (^{KUR}^{URU}Išawa)՝ Արածանի ստորին ավազանը, Պախուվան (^{KUR}^{URU}Pahwa)՝ այժմյան Դերսիմից մինչև Բյուրակնի լեռների արևմտյան հատվածը և Ծուխման (^{KUR}^{URU}Zuhma)՝ Արածանի վերին ավազանի հյուսիս-արևելյան շրջանները (22, էջ 34-38): Սրանք, ինչպես մեր ուսումնասիրություններն են ցույց տալիս, Հայասա երկրի բաղկացուցիչ մասերն են կազմում:

Այսպես. Սուպիլուլիումաս 1-ինի տարեգրության մի հատվածում գրված է, թե նրա հայր Թուդխալիյասի զորահրամանատար Կանտուծիլիսը զորքով մտել է Հայասա և հարձակվել Արժիյա (^{URU}Arzija) քաղաքի վրա, որը գտնվել է «Բարձր» երկրի կազմի մեջ (14, էջ 58, 60): Այդ քաղաքը միջնադարի հայկական Արժնն է՝ ժամանակակից Երզրումից քիչ հյուսիս (22, էջ 35): Խատուսիլիս 3-րդը իր պապ Սուպիլուլիումասի մասին նշում է, որ նա զորքով գնացել է Հայասա, և այնտեղ այդ երկրի թագավոր Կարանին նրա դեմ ճակատամարտ է մղել Կումախա (^{URU}Kumaha) քաղաքի մոտ: Այս բնակավայրը, որ նույնպես «Բարձր» երկրում է եղել, Երզնկայի շրջանի Կամախն է (այժմ՝ Զեմախ) (22, էջ 35-36): Մուրսիլիս 2-րդը գրում է, որ իր հայր Սուպիլուլիումասը զորքով հասել է Ծուխապա քաղաք, որտեղ գրվել է Հայասայի զորքի դեմ (14, էջ 113): Այս քաղաքը գտնվել է Բյուրակնի լեռների արևելյան շրջանն ընդգրկած Ծուխմա երկրում, որը նույնպես հայասական նահանգ էր (22, էջ 42):

Դուկամա քաղաքը(^{URU}Dukama)»՝ որպես Հայասայի Բալտակի աստծու պաշտամունքային կենտրոն, հիշատակված է խեթական արքա Սուպիլուլիումաս 1-ինի և Հայասայի թագավոր Խուկանայի միջև կնքված դաշնագրում: Այդ բնակավայրը, Մուրսիլիս 2-րդի տարեգրության համաձայն, Ազի երկրի քաղաքներից է, որը նա գրավել է Արիպսայից հետո (14, էջ 134, 136): Մեկ այլ դաշնագիր կնքվել է Խատիի (Խեթական երկրի) թագավոր Արնուվանդաս 3-րդի (մ.թ.ա. 13-րդ դարի 2-րդ կես) և Դուկամա քաղաքի առաջնորդ՝ Ազի երկրի տիրակալ Ախիայի միջև: Ուրեմն Դուկաման Հայասայի թագավորանիստ Ազի երկրի կենտրոնական քաղաքներից է եղել:

Հայասայի տարածքի և նրա էթնիկ կազմի մասին ավելի որոշակի պատկերացում կարելի է կազմել Արնուվանդաս 3-րդի և Ախիայի՝ վերը նշած դաշնագրից: Այդտեղ գրված է, որ Ծուխմա, Իսուվա, Պախուվա և Կումախա (այն տվյալ դեպքում «Բարձր» երկիրն է) երկրների բնակիչները Ախիայի տոհմակիցներն ու ցեղակիցներն են: Այսինքն՝ Հայասան իր Ազի, Կումախա, Պախուվա, Իսուվա և Ծուխմա երկրներով ունեցել է հիմնականում միանման էթնիկական կազմ և ընդգրկել է Վանա լճի, Հայկական Տավրոս լեռների, Եփրատ գետի ու Սև ծովի միջև ընկած ողջ տարածաշրջանը (22, էջ 37): Այս հինգ վարչաքաղաքական միավորներից բացի խեթական գրավոր աղբյուրներում Հայասայի զբաղեցրած տարածքի վերաբերյալ տեղեկություններ չեն հանդիպում:

Հայասայի՝ որպես առանձին պետական կազմավորման գործառության մասին վկայում են բազմաթիվ փաստեր, որոնցից կարելի է առանձնացնել հստկապես Խատիի թագավոր Սուպիլուլիումաս 1-ինի և Հայասայի արքա Խուկանայի՝ երկու ինքնուրույն երկրների տիրակալների միջև կնքված դաշնագիրը: Հատկանշական է նաև այն, որ դրանում որպես փոխադարձ պայմանավորվածությունների կատարման երաշխավորներ են վկայակոչված այդ դաշնակից երկրներից յուրաքանչյուրի աստվածները՝ նրանց պաշտամունքի կենտրոն համարվող քաղաքների հիշատակությամբ (14, էջ 148): Իսկ հնագույն ժամանակներում ժողովուրդների ինքնուրույնության չափանիշներից կարևորագույնը, ինչպես հայտնի է, սեփական դիցարան ունենալու փաստն էր: Ուրեմն, եթե մույնիսկ անտեսենք այլ իրողություններ, հենց միայն այս օրինակը, կարծում ենք, բավարար հիմք պետք է ծառայի՝ չժխտելու համար մ.թ.ա. 2-րդ հազարամյակում Հայասա ինքնուրույն պետության գոյության փաստը:

Ինչպիսի՞ն էր Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում տեղակայված այդ պետական միավորի ազգաբնակչության էթնիկ պատկանելությունը: Այս հարցի պատասխանը էական նշանակություն ունի ոչ միայն հայագիտության համար:

Տարբեր հեղինակների կողմից բազմիցս է քննարկվել մեր *հայ* ցեղանվան և *Հայասա* (KUR^{URU}Ha-ja-ša) տեղանվան միջև առկա հնչյունական (-aša խեթ. ածանց) մամուռյան հարցը: Նրանք, որոնք գտնում են, թե հայերը Բալկաններից Հայկական լեռնաշխարհ են թափանցել մ.թ.ա. 1-ին հազարամյակում, այսինքն՝ Հայասա պետության, ըստ նրանց, կործանումից հետո, այդ մամուռյունը համարում են պատահական կամ, այսպես կոչված, «հայասական տեղաբնակներից» «եկվոր հնդեվրոպացիներին» փոխանցված ինքնանվանում: Կամ նաև լեզվաբանական վերլուծությամբ ներկայացվող կարծիքներ, որոնց հեղինակները դարձյալ աշխատում են կա՛մ հաստատել, կա՛մ ժխտել այդպիսի կապի գոյությունը (տե՛ս 36, էջ 279-285): Մենք նույնպես ժամանակին անդրադարձել ենք այս հարցին (22, էջ 41-42): Այստեղ հարկ ենք համարում շեշտել մեր տեսակետը:

Նախ՝ նշենք, որ *Խատի* երկրի անունից *Հայասա* բխեցնելը (Hati > *հայ*)՝ որպես մեկը մյուսի շարունակություն, ինչպես առաջարկում են ոմանք, անհիմն է, քանի որ մ.թ.ա. 14-13-րդ դարերի խեթական սեպագիր արձանագրություններում այդ անունները նույնիսկ կողք կողքի են հանդիպում: Ուրեմն՝ լրանք, իրոք, տարբեր տարածքների տեղանուններ են: Առանց *հայ* բառարմատի ծագումնաբանական քննություններին դիմելու՝ քենք գտնում ենք, որ դրա ու *հայ-ել*, *հայ-աց-ք* և մամատիպ այլ բառերի արմատի միջև որոշակի բառիմաստային կապ գոյություն ունի:

Հակառակ Ի. Դյակոնովի և այլոց կարծիքի, որոնք բացառում են Հայասայի տեղանունների ինչ-որ ձևով հայերեն կազմություններ լինելու հնարավորությունը, հայերեն արմատներ և ածանցներ ենք գտնում գրեթե բոլորում, որոնց թիվը 65-ից անցնում է (22, էջ 39-46): Այս փաստը ևս, իհարկե, վկայում է Հայասայի բնիկների՝ հայ լինելու մասին: Մինչդեռ ըստ այդ հեղինակների՝ Հայասայի և Հայքի տեղանունների որոշ մամուռյուններ կարելի է բացատրել՝ որպես տվյալ տարածաշրջանում հայերին նախորդած՝ ավելի հին ժողովրդի լեզվի մասունքներ (9, էջ 213): Այնուամենայնիվ, փորձ անգամ չի արվում այդ կանխակալ կարծիքը լեզվական որևէ փաստով հաստատելու համար (8, էջ 154):

Ստորև ներկայացնենք Հայասայի տեղանուններից մի քանիսը, որոնք կազմված են հին հայերենի բառարմատներից, ածանցներից:

Ազի (^{KUR}Azi) նահանգի անունը (այն ընդգրկել է Շորոխի ողջ ավազանը) պահպանվել է տեղի հին հայկական *Ազորդ* կոչված գավառի անվան մեջ: Դրանցում առկա է հին հայ. *ազազել* «չորանալ» բայի հնդեվրոպական ծագման *ազ-* «չոր» արմատը: *Իսու/վան* (^{KUR}Išawa), որ տեղադրությամբ հայկական *Ճոփք* նահանգին է համապատասխանում, կարծում ենք՝ հայկական անվան խեթերեն արտասանությամբ տարբերակն է: Կարելի է համեմատել նաև այդ նահանգի անվան հին հունարեն *Σαφονή* ձևը: Հայերեն անվան մեջ կարելի է առանձնացնել հին հայ. *ծոպ/ի* «երիզ» բառը: Բյուրակնի լեռների շրջանի *Ճուխմա* (^{KUR}Zuhma) տեղանվան մեջ առկա է հին հայ. *ծոխ* արմատը: *Կումախա* (^{URU}Kumaha) քաղաքի անունը, որը հանդիպում է նաև *Կամախանա* ձևով (այժմյան Զեմախ՝ Երզնկայի մոտ), հին հայ. *կամախ* «ընծա» բառն է: Իսկ *Արձիյա* քաղաքի (^{URU}Arzija) անունը բաղկացած է հնդեվրոպական ծագման հին հայ. *արծ-* «սպիտակ» արմատից: Հայասայի Պախտովա նահանգի համանուն կենտրոնը կոչվել է նաև *Պախտտեյա* (^{URU}Pahuteja) (14, էջ 36, 44), որը, հավանաբար, հայերեն տարբերակն է. առաջինը կազմված է խեթերեն -awa ածանցով, իսկ մյուսը՝ հին հայ. *-տէ* (*-տի*) «մեծ» բառով և *-եսայ* (*-յա*) ածանցով (22, էջ 36): Այդ նահանգի արևելյան շրջանի *Արխիտան* (^{URU}Arhita) տեղադրությամբ համընկնում է հայկական Երիզա քաղաքին, որի անունը, հավանաբար, խեթերը քարգմանել են իրենց լեզվով (հմմտ. խեթ. arha «սահման», եզակի թվի գործիական հոլովով arhita և հայ. *երիզ* «եզր. ժապավեն, երկար կտավի շերտ»), որը հին աշխարհում հաճախ հանդիպող երևույթ է:

Ի. Դյակոնովը հայերենի և Հայասայի բնիկների լեզվի որևէ առնչություն ժխտելու համար իբր փաստարկ է համարում Հայասայի արքայաճանապարհների և դիցանունների ոչ հայերեն լինելը՝ ասածը առանց որևէ ձևով ապացուցելու (9, էջ 214, 213 և ծան. 56, 57): Նախ՝ նշենք, որ սովորաբար անձնանունները ոչ միշտ են տվյալ ժողովրդի լեզվի բնիկ արմատներով ու մասնիկներով կազմություններ լինում: Քիչ չեն նաև փոխառությունները: Բայց և այնպես այդ երկրի և՛ տիրակալների, և՛ աստվածների՝ մեզ հասած անունների մեծ մասը բաղկացած են հայերեն արմատներից:

Այսպես. *Մարիյա* (^mMarija) արքայանուիր կազմված է հին հայ. *մար* «տեր» արմատից ու *-եայ* // *-իայ* ածականակերտ ածանցից և հավանաբար նշանակել է «տիրական» (22, էջ 47-48): *Կարանի*-ն (^mKarani) իր մեջ ունի հին հայ. *կար*- «հասու. հարկավոր» ինքնուրույն գործածությունը կորցրած արմատը (հմմ. *կարենայ*) և *-անի* ածանցը, հետևաբար՝ ունեցել է «կարող, ունակ» իմաստ: *Խու/կանա*-ն (^mHukana) *խոկ* «խորհուրդ» (հմմ. *խոկայ*) արմատն է *-ան* ածանցով ու մոտավորապես նշանակել է «խորհող»: *Անիյա*-ն (^mAnija) բաղկացած է գրաբարի *անիացեալ* «խնամյալ» բառի *անի*- արմատից, *-եայ* (*-յա*) ածանցից և ունեցել է, հավանաբար, «խնամված» իմաստը: Իսկ *Աիսիյա* (^mAisija) անվան բաղադրիչներն են հին հայ. *այս* «հողմ, քամի» բառը, որն, ի դեպ, առկա է նաև հայկական *Այս* դիցանվան մեջ, և վերոհիշյալ ածանցը (22, էջ 45-46):

Խեթական թագավոր Սուպիլուլիումաս 1-ինի՝ Հայասայի արքա Խուկանայի հետ կնքած վերը նշած դաշնագրում վկայակոչված հայասական աստվածների մի մասի անունները ներկայացված են շումերերեն գաղափարագրերով. մի քանիսը՝ խեթերեն թարգմանություններով, որոշ մասն էլ կավե տախտակի վնասվածության պատճառով անընթեռնելի է: Մնացածներից հայերենով կարելի է բացատրել հետևյալները, թեպետ այդ աստվածությունների պաշտամունքային նշանակությունները, ցավոք, մեզ հայտնի չեն:

Տերիտիտունի (^dTeritituni) անվան մեջ, կարծում ենք, Ter- բաղադրիչը հանգում է հնդեվրոպական *dei- արմատին, որից ծագում են նաև ցեղակից այլ լեզուների դիցանուններ, ինչպես և, ըստ է. Աղայանի, գիտության, ու ճարտարության հին հայկական *Տիր* // *Տիր* աստծու անունը (18, էջ 148): Այս դեպքում սեպագիր արձանագրության դիցանվան մեջ առկա է հայերեն բառի ավելի հին տարբերակը (*dei-r- > *utir-): Իսկ երկրորդ բաղադրիչը ձևով նույնանում է հայերեն *տուտն* // *տըտուն* «ծայր, եզր, ագի» բառի հետ, որը Գ. Ջահուկյանը բխեցնում է հնդեվրոպական *dud- արմատից (36, էջ 119): *Բալտաիկ* (^dBaltaik) աստծու անունը նույնպես կարելի է հայերենով բացատրել: Այն բաղկացած է հին հայ. *բաղտի* «չարաբախտ» արմատից և *-այ-ք* բաղադրյալ ածանցից: Պետք է ենթադրել, որ այդ աստվածությունը ինչ-որ ձևով առնչվել է չար ուժերին: *Ունագաստա* (^dUnagaštaš) դիցանվան մեջ, կարծում ենք, առկա են հին հայ. *ունակ* «կարող, ընդունակ» բառը և *աստանել* «քննել» բայի *աստ*- արմատը:

Ի. Դյակոնովը հայկական լեռնաշխարհի՝ մ.թ.ա. 14-13-րդ դարերի էթնիկական կազմը խեթալուվիական է համարում նաև՝ ելնելով այն բանից, որ Խատիի թագավոր Արնուվանդաս 3-րդի դաշնագրում թվարկված *Իսուվա*, *Պախուվա*, *Կումախա* («Բարձր» երկիր) և *Շուխմա* նահանգների մեջ մտնող քաղաքների ավագների անունները, ըստ նրա, խեթալուվիական են: Բացի այդ, Արածանիի ստորին ավազանում գտնվել են այդ ժամանակաշրջանին վերաբերող լուվիական հիերոգլիֆներով գրված մի քանի տասնյակ արձանագրություններ, որոնք, ինչպես հեղինակն է գտնում, նույնպես վկայում են այդ տարածաշրջանի լուվիական բնակչությունն ունենալու մասին (9, էջ 86, ծան. 30):

Նշված դաշնագրում այդ ավագների մասին կարդում ենք. «Այս ավագներն են այստեղ: Դրանց Խատի երկրից ընդունեք և տեղաբաշխեք» (22, էջ 88): Ուրեմն դրանք Խատի երկրից են ուղարկված, որոնց Արնուվանդաս 3-րդի դաշնակից Աիսիան՝ Ագի երկրի տերը, պետք է ընդունի և տեղաբաշխի իր տիրույթում: Հետևաբար՝ Խատի երկրից ուղարկված ավագները խեթեր են եղել, որոնք, բնականաբար, կրել են խեթական անուններ: Ինչ վերաբերում է լուվիական հիերոգլիֆներով արձանագրություններին, ապա, ինչպես հայտնի է, խեթերը սեպագրերին զուգահեռ օգտագործել են նաև գրության այդ ձևը՝ որպես առօրյա գրագրության միջոց: Ուստի Արածանիի ավազանում հայտնաբերված այդ արձանագրությունները կարող են գրված լինել Հայաստանում Խատի երկրից եկած մարդկանց, գուցե և ուղարկված ավագների կողմից և հիմք չեն տալիս մտածելու, թե Հայաստան ամբողջությամբ բնակեցված է եղել լուվիացիներով:

Մ.թ.ա. 1244 թ. Ասորեստանի թագավոր Թուքուլթի-Նինուրթա 1-ինը իր իշխանության առաջին տարում, նվաճելով վերին Տիգրիսի ավազանի շուբարիական (խուրիական) երկրները, անցնում է «հզոր» լեռները՝ Հայկական Տավրոսը և մուտք գործում Նաիրի երկրներ: Դա նշանակում է, թե Նաիրի երկրների հարավային սահմանը նշված լեռնաշղթան է: Այնուհետև նա, անցնելով Եփրատ գետը, գերի է վերցնում խեթական 28800 զինվորների: Տվյալ փաստը հուշում է, որ նշված գետով Նաիրի երկրները սահմանակցել են Խատիի հետ: Մեկ այլ հաղորդման համաձայն՝ Ասորեստանի թագավորը այդ արշավանքի ժամանակ նվաճել է Նաիրի երկրները՝ մինչև «Վերին» ծովը, որը, ինչպես հայտնի է, Սև ծովն է: Իսկ Թուքուլթի-Նինուրթա 1-ինի ժամանակակից Խատիի թագավոր

Թուոխալիյաս 4-րդը այդ նույն տարածաշրջանը վկայում է Հայաստանում (22, էջ 82-83): Ուրեմն կարելի է եզրակացնել, որ Հայաստան և Նաիրի երկրները նույնական են (22, էջ 82-83):

Այսպիսի մոտեցումը Ի. Դյակոնովը քննադատում է այն պատճառաբանությամբ, որ Նաիրին (KUR.KUR^{meS} Nairi) աստուրական աշխարհագրական տերմին է, ուստի չէր կարող այն փոխարինել Հայաստանին (8, էջ 159): Ավելորդ ենք համարում այստեղ թվարկել այն բազմաթիվ վարչաքաղաքական միավորները, որոնց կամ պաշտոնական, կամ ժողովրդախոսակցական անվանումները նաև աշխարհագրական են: Ասվածի ապացույց կարելի է համարել հենց այն փաստը, որ Ասորեստանի թագավորները Ուրարտուն՝ Վանի թագավորությունը, հաճախ կոչել են նաև Նաիրի: Նույնիսկ Ուրարտուի արքա Սարդուրի 1-ինը աստուրերեն գրած արձանագրության մեջ իրեն կոչում է «թագավոր Նաիրի երկրի» (4, №1): Ճիշտ է, Ասորեստանի տիրակալ Աշուրնասիրապալ 2-րդը Բիթ-Ջամանի (այժմյան՝ Դիարբեքիի շրջան) և Խուբուշկիա (Բոհտանի հարավային ավազան) երկրները նույնպես երբեմն կոչում է Նաիրի (3, էջ 89), սակայն այն չի կարելի համեմատել ոչ Եփրոսյա և ոչ էլ Ասիա ու այլ աշխարհագրական անունների հետ, ինչպես վարվում է Ի. Դյակոնովը: Նաիրի-ն աստուրերեն բարդ բառ է՝ փոխառյալ շումերերենից և նշանակում է «լեռնաշխարհ, լեռնային երկիր» ու հանդիպում է միայն մ.թ.ա. 13-7-րդ դարերի աստուրական սեպագիր աղբյուրներում: Ինչպես երևում է, այն այլ ժողովուրդների կողմից չի գործածվել և չի ընդհանրացել:

Մ. թ.ա. 2-րդ հազարամյակում Հայաստան կամ Նաիրի կոչվող պետական միավորի զբաղեցրած գրեթե ողջ տարածքը մ.թ.ա. 1-ին հազարամյակում աստուրական արձանագրություններում, ինչպես նշվեց, հանդիպում է Ուրարտու անունով: Այս փաստը, առանց որևէ այլ հիմնավորման, հիմք է տվել որոշ գիտնականների, ինչպես օրինակ՝ Ի. Դյակոնովին, եզրակացնելու, որ ուրարտները դեռ մ.թ.ա. 2-րդ հազարամյակից ապրել են Հայկական Տավրոսից հյուսիս, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհում (9, էջ 17):

Աստուրական թագավոր Սալմանասար 1-ինը դեռևս մ.թ.ա. 1274 թ. վերին Տիգրիսի և դրա աջ թև Խաբուրի անկյունում հիշատակում է Ուրուատրի կամ Ուրատրու (Uruatri, Uratri) երկիրը (3, էջ 12-14): Այն մ.թ.ա. 890 թվականից սեպագիր արձանագրություններում այլևս չի հան-

դիպում, իսկ նրա զբաղեցրած տարածքի այս կամ այն մասը նշվում է հարևան երկրների կազմում: Այնուհետև հիշյալ անվանումների Ուրարտու տարբերակին հանդիպում ենք Սալմանասար 3-րդի արձանագրությունում, որը մ.թ.ա. 859 թ. պատերազմ է մղում այդ անունով մի պետական կազմավորման դեմ: Այն ընդգրկում էր արդեն Վանի նահանգը (7, N 27): Այստեղից կարելի է եզրակացնել, որ Ուրատրուի դեմ ձեռնարկած աստուրական արշավանքների ճնշման տակ այդ երկրի բնիկները, այսպես կոչված՝ ուրարտները, գաղթել են Վանի նահանգ և մոտավորապես մ.թ.ա. 890 թ. նրանք վերջնականապես կորցրել են իրենց հայրենիքի պետականությունը: Նոր տարածքում՝ Վանա լճի ավազանում, մ.թ.ա. 859 թ. այդ եկվորները հիմնում են Բիսինիլի պետությունը, որին աստուրները նրանց նախկին Ուրատրու երկրի անունով կոչում են Ուրարտու (22, էջ 118-121):

Ըստ Ի. Դյակոնովի՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակում վերին Տիգրիսի և վերին Եփրատի ավազանների (Հայկական լեռնաշխարհ) երկրները աստուրական գրավոր աղբյուրներում կոչվում էին շուբարիական՝ խուրիական (9, էջ 16 և ծան. 14): Հեղինակը, փաստորեն, Արմե (հետագա՝ Սասուն) երկրի աստուր. սեպագիր աղբյուրներում վկայված Շուպրիա (Šupria) և Շուբարի (Խուրի) երկրների անունները նույնացնում է: Շուպրիա-ն, սակայն, աստուրերեն šupuru «շրջափակված» բառն է, որը լեռներով շրջապատված Սասունն է և, իրոք, բնութագրող էպիտետ է: Իսկ Շուբարի-ն մասնագետներին հայտնի է որպես շումերերեն SU.BIR₄ անվան աստուր. տարբերակ՝ «մարգագետնի ցեղ» նշանակությամբ, որով և կոչվել են շումերները մ.թ.ա. 3-րդ հազարամյակում, իսկ մ.թ.ա. 2-րդ հազարամյակում՝ նաև խուրիները:

Վերին Տիգրիսի ավազանի երկրների մասին առաջին անգամ վկայում է Ասորեստանի տիրակալ Թուրուքի-Նինուրթա 1-ինը մ.թ.ա. 1244 թ.՝ իր ձեռնարկած արշավանքի առիթով: Նա այդ տարածաշրջանում նվաճում է Բաբիսի, Կադմուխի, Պուշի, Մունե, Ալզի, [Մադանի], Նիխանի, Ալայա, Թեբուրգի և Պու[րուկուգի] շուբարիական երկրները (7, № 4): Սակայն դրանք, հետագոտողների կատարած տեղադրումների համաձայն, գտնվել են արևմտյան Տիգրիսից և նրա վտակ Բոհտանից անմիջապես հարավ: Բացի այդ, դրանց ցուցակում Շուպրիան երբևէ չի հիշատակվում: Եվ հակառակ այս փաստերի, Ի. Դյակոնովը, այնուամենայնիվ, գտնում է, որ Շուպրիան (ուրարտ. Արմե, ուշ՝ Սա-

սուն) խուրիներով է բնակեցված եղել, քանի որ դրա թագավորները խուրիներն անուններ են ունեցել (9, 17, ծան. 16): Սիայն անձնանունների վրա հենվելով հնարավոր չէ որոշել որևէ երկրի էթնիկական պատկանելությունը: Հաճախ դրանք լինում են փոխառություններ այլ լեզուներից: Կրկին հարկ է նշել, որ վերին Եփրատի (Մալաթիայի շրջանից հյուսիս՝ մինչև ակունքները), ինչպես և նրա արևելյան թևի՝ Արածանիի ավազանների երկրները, վերը նշած գրավոր աղբյուրներում երբեք խուրիական կամ շուբարիական չեն համարվել:

Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար I-ինը մ.թ.ա. 1113 թ. դեպի Հայկական լեռնաշխարհի կատարած արշավանքի ժամանակ նվաճել է Նաիրի երկրները՝ Տումեից (Հայկական Տավրոս լեռների ծայր արևմտյան շրջան) մինչև Դայանեի երկիր (Տայք, Ճորոխի ավազան), Խաթխիից (Վանա լճից հարավ, այժմյան Բոհտանի ավազան) մինչև «Մեծ» ծով (Սև ծով, 7, №10): Այստեղ էլ ակնհայտ է, որ Նաիրի երկրները իրենց տարածքով նույնպես համընկնում են Հայաստանի հետ: Նա իր տարեգրության մեջ հիշատակում է Նաիրի 23 երկրների և 16 լեռնաշղթաների նվաճման մասին:

Ի. Դյակոնովը գտնում է, որ դրանք ակնհայտ խուրի-ուրարտական են՝ նկատի ունենալով այդ անուններից մի քանիսի վերջավորությունները, որոնք հիշեցնում են նշված լեզուների -ո մասնիկը (9, էջ 125-126):

Հիշատակված լեռնաշղթաներից *Էլամա*-ն (^{SADU}Elama) մենք հակված ենք նույնացնելու ժամանակակից Խաքյարի լեռների (Վանա լճից քիչ հարավ-արևելք) *Էլամունի* լեռան հետ՝ հիշատակված նույն տիրակալի մեկ այլ վավերագրում (5, էջ 253): Կարծում ենք՝ *Էլաման* նշված լեռնաշղթան է ներկայացրել, որի անունը կազմված է հին հայ. *ել* «զառիվեր» և *ամ*- «ի» (հմմ. *ամ-ալ* «լցնել») արմատներից ու նշանակել է, հավանաբար, «զառիվեր լանջերով հարուստ», ինչը խիստ բնութագրական է նրան: *Էլուլա*-ն (^{SADU}Elula) հիշեցնում է Հայկական Տավրոսի արևելյան հատվածի *Էլուլա* հին հայկական բնակավայրը, որը, հնարավոր է, կոչվել է այդ լեռների անունով: Այդ անվանումը, կարծում ենք, կազմված է հին հայ. վերը նշած *ել* «զառիվեր, վերելք» և *ուլ* «վիզ, պարանոց» արմատներից՝ երևի բնութագրելով լեռնաշղթայի գագաթները: *Թարխունա*-ն (^{SADU}Tarhuna), թերևս, ժամանակակից Կարգաբազարի լեռներն են, որոնց փեշերից մեկի վրա միջնադարում գոյություն է ունեցել *Թարխունի* անունով մի գյուղ: Այն հին հայ. *Թարխա* «նախագիծ, ուրվական քան-

դակների» բառն է՝ -ուն ածանցով: *Խաշ/տարաե-ն* (^{SADU}Haštarae), ենթադրում ենք, որ Հայկական պար լեռնաշղթայի անունն է, որի կենտրոնական մասի վրա միջնադարում եղել է *Խաաղար* անունով մի բնակավայր: Այն, կարելի է ենթադրել, հին հայ *խաշն* «ոչխարի հոտ» և *ղար* «բարձրավանդակ» արմատների միացությունն է: Նույն ձևով են բացատրվում ևս տասը լեռնաշղթաների անունները (22, էջ 97, 99):

Նաիրյան 23 երկրներն ըստ էության գավառներ են: Նշենք, որ շումերներն KUR գաղափարագիրը սեպագիր արձանագրություններում դրվում է վարչաքաղաքական բոլոր տեսակի միավորների անունների վրա: *Անդիաբեն* (^{KUR}Andiabe), կարծում ենք, Կոգովիտի Այնթափ բնակավայրի հին անունն է և ներկայացրել է համապատասխան գավառը: Ի դեպ, *Այնթափ*-ը հայերեն բառ է՝ բաղկացած հին հայ. *այն* «ակն, ակունք» և *թափ* «հատակ, խորք» արմատներից, և նշանակել է, հավանաբար, «խոր ակունք»: Հետևաբար չի բացառվում, որ *Անդիաբեն*-ն հայերեն անվան օտարահունչ տարբերակն է եղել: *Կուլիբարզինի*-ն (^{KUR}Kulibarzini), թերևս, Արածանիի մի թևի՝ Քդի գետի վերին ավազանի հին հայկական Կողոբերդ բնակավայրն է՝ իր շրջանով: Սեպագիր շրջանի այս տեղանունը կարելի է ստուգաբանել որպես հին հայ. *կող* «լանջ», *բարծու* «բարձր» արմատներով ու -ին ածանցով կազմված բարդ բառ, որը հուշում է, թե գավառը գտնվել է բարձր լանջերի վրա: *Պայտերի*-ն (^{KUR}Paiteri), մեր կարծիքով, պահպանվել է Հայկական պար լեռների միջին շրջանի հին հայկական *Պայդերան* գյուղի անվան մեջ: Դրանում մենք տեսնում ենք հին հայ. *պայթել* «ճաքել» բայի *պայթ*- արմատը -եր հոգնակիակերտ ածանցով: Ի դեպ, նշված տարածաշրջանը հրաբուխներով հարուստ է եղել, որոնց խառնարանները պահպանվել են առայսօր (22, էջ 100): *Դայանեի* // *Դայանի*-ն (^{KUR}Dajaeni // Dajani) Ճորոխի ավազանի հին հայկական Տայք նահանգն է, որի սեպագիր անվան մեջ, հավանաբար, առկա է *ղայ* «դախ, կարծր» բառը և -անի ածանցը: Այն կոչվել է իր կենտրոն *Տայոց քար* բերդի անունով, որը կառուցված է եղել կարծր ժայռի վրա: Ի դեպ, Գ. Մելիքիշվիլին Ճորոխի ավազանի բնակչության էթնիկական կազմը որոշելիս Դայանեիի՝ Տայքի թագավոր *Սենի*-ի (^mSeni) անունը քիսեցնում է խուրիներն Տենի «եղբայր» բառից: Նույն երկրի Ասիա (^mAsia) առաջնորդի անունը հեղինակը կապում է խուրիական Azia անձնանվան հետ: Դրա հիման վրա նա եզրակացնում է, որ նշված տարածաշրջանը բնակեցված է եղել խուրիներով (11,

էջ 113): Մինչդեռ Ծորոխի ավազանը աստուր. սեպագիր աղբյուրներում երբևէ *խորի* կամ *Շորարի* անունով չի կոչվել: *Սենի* անունը, կարծում ենք, իր մեջ ունի հին հայ. *սեն* «ինչ-որ մետաղ. կապար» արմատը: Միջնադարի հայկական *երկաթ*, *երծաթ*, *ոսկի* անձնանունները, որոնք, ինչպես նշում է Հ. Աճառյանը, վերցված են համապատասխանաբար *երկաթ*, *արծաթ* և *ոսկի* բառերից, հաստատում են, որ *Սենի* անձնանունը ևս հայ. *սեն* արմատն է: Իսկ Ասիան հնդեվրոպական ծագման հայերեն *աս*-«ասածը, խոսք» արմատն է՝ *-ես* // *-յա* ածանցով: Այն հանդիպում է միջնադարի հայկական ձեռագիր հիշատակարանների *Ասել* (*-ել* բայական վերջավորությամբ) և *Ասա-Սելիք* անձնանունների մեջ (30, Ա, էջ 1429): Հին հայերեն բառարմատներից են կազմված նաև Թիվլաթպալասար 1-ինի հիշատակած մյուս գավառների անունները:

Մ.թ.ա. 11-10-րդ դարերի աստուրական աղբյուրներում Հայկական լեռնաշխարհի մասին, բացառությամբ հիմնականում խուռիներով բնակեցված վերին Տիգրիսի ավազանի, հաղորդումներ չեն հանդիպում: Իսկ մ.թ.ա. 9-7-րդ դարերի ուրարտական և աստուրական սեպագիր արձանագրությունները բավական հարուստ տեղեկություններ են պարունակում այդ տարածաշրջանի վերաբերյալ, որոնք օգնում են պարզելու տվյալ ժամանակաշրջանի ինչպես վարչաքաղաքական միավորների, աշխարհագրական վայրերի տեղաբաշխվածությունը, այնպես էլ բնակչության ազգային կազմը:

Նշված լեռնաշխարհի արևելյան հատվածը ուրարտական վավերագրերում, սկսած մ.թ.ա. 9-րդ դարի վերջին քառորդից, հանդես է գալիս *Էտիունի* (^{KUR}Etiani, ^{KUR}Etisni) անունով: Ի. Դյակոնովը դրանում առանձնացնում է ուրարտ. -ոն ածանցը, իսկ բնակիչներին կոչում է *Էտիվներ*՝ նրանց նույնացնելով ուրարտների հետ (9, էջ 18): Կարծում ենք՝ այդ տեղանվան մեջ առկա է խուրիներն *eti* «անձ. մարմին» բառը և խուրի-ուրարտ. -ոն ածականակերտ ածանցը և նշանակում է «անձնական»: Այն ուղղակի թարգմանություն է *Այրարատ* տեղանվան, որը, ինչպես գրում է Մովսես Խորենացին, ստեղծվել է հայոց թագավոր *Արայ Գեղեցիկի* անունով: Հայ պատմիչի աշխատության՝ Բեռլինի թանգարանի ձեռագրում այդ բառը գրված է *Արայարտ* ձևով, որը և նշանակում է «Արայի մշակելի հող»:

Գ. Մելիքիշվիլին Երասխի միջին ավազանի Աբիլիանիսի գավառի առաջնորդի *Մուրինի* (^mMurini) անունը բխեցնում է ուրարտերենի *murie*

«գանձ(°)» բառից և ենթադրում, թե այդտեղ ուրարտներ են ապրել (11, էջ 110): Այդ անձնանունը, սակայն, կարելի է ստուգաբանել և հայերենում. այն կազմված է հայերենի հնդեվրոպական ծագման *մուր*՝ «մուր, սև» արմատից և *-ին* ածանցից: Բառը հանդիպում է միջնադարի հայկական *Մուրս*, *Մուրում*, *Մուրիկ*, իսկ դրա *սև* հոմանիշը *Սևեկ*, *Սևիկ*, *Սևի*, *Սևուկ* անձնանուններում: Գ. Մելիքիշվիլին Չըլդըր լճի հարավային ավազանի Իգանի գավառի առաջնորդ *Դիուծինի* (^mDiushini) անվան ոչ համոզիչ ստուգաբանություն է առաջարկում՝ նրանում առանձնացնելով խուրիներն *tiu* «բառ» և *šeni* «եղբայր» բառերը (11, էջ 112): Ավելի հավանական ենք գտնում *Դիուծինի*-ն համարել հին հայ. *դիւ-ք* // *դիւ-ց* «հեթանոսական աստված» և *ծին* «ծնունդ» հնդեվրոպական ծագման արմատներով կազմված բառ, որը, բնականաբար, նշանակել է «դիցագն, Աստծուց սերված»:

Մ.թ.ա. 9-7-րդ դարերի Հայկական լեռնաշխարհի հայերեն արմատներ ու ածանցներ պարունակող մոտ երեք հարյուր տեղանունների ու անձնանունների մեր կողմից կատարված քննության արդյունքների մի մասը լույս է տեսել (22, էջ 121-129), իսկ մյուս մասը պտրաստվում է հրատարակության:

Հայկական լեռնաշխարհում նախաուրարտական շրջանում հայ էթնոսով բնակեցված պետական կազմավորման գոյությունը ժխտողները, ինչպես օրինակ՝ Ի. Դյակոնովը, գտնում են, որ, իբր, Ուրարտուի գոյության փաստը Մովսես Խորենացու համար անհայտ է եղել: Դրանից հետևում է, որ հայոց հին պատմությանը վերաբերող մեր պատմահոր տեղեկությունները հավաստի չեն: Նա Խորենացու պատմությունը խիստ կասկածելի է համարում նաև այն պատճառաբանությամբ, թե իբր հեղինակը օգտվել է անհայտ ասորի գրիչ Մար Աբաս Կատինայի ներկայացրած չստուգված աղբյուրից (9, էջ 185):

Պատմիչը իր աշխատության մեջ հայոց Անուշավան թագավորի մասին խոսքը ավարտելուց հետո գրում է. «Բաց թողնելով դեպքերից ոչ շատ կարևորները՝ ասենք ինչ-որ անհրաժեշտ է: Այս վերջիններից մի մասը ասորեստանցիների թագավորության ժամանկ, մի մասն էլ Շամիրամից կամ Նինոսից սկսած, իսկ մեր Պարույրը եղավ Սարդանապալի ժամանակ» (32, I, իա):

Մովսես Խորենացին Անուշավանից հետո մինչև Պարույրի թագավորության ժամանակաշրջանը՝ Հայաստանի պատմությունը չի շարա-

դրում, դա համարում է ոչ կարևոր, քանի որ այդ ժամանակահատվածում օտար մարդիկ են իշխել երկրում: Նա թվարկում է օտար տիրակալների 25 անուններ, որոնք իշխել են երկրում՝ Շամիրամից (մ.թ.ա. 810 թ.) կամ Նինոսից (Սալմանասար 3-րդ, մ.թ.ա. 859 թ.) սկսած: Այնհայտ է, որ դրանցից առաջինը Վանի թագավորության հզորության սկիզբն է, իսկ երկրորդը՝ այդ պետական կազմավորման ասպարեզ գալու տարին: Հետևաբար՝ դրանք Վանի օտար՝ ուրարտական տիրակալներն են (22, էջ 116-117):

Մովսես Խորենացին իր աշխատության մի ծանոթագրության մեջ դրանց մասին գրում է. «Սրանից առաջ ոչ ըստ ազգի, այլ ըստ մարդկանց առաջադիմության» են իշխել (32, I, ժթ): Հղումը դրված է հայ պատմիչի աշխատության մեջ բերված ցուցակում՝ Արա Գեղեցիկի անվան վրա: Այնինչ հեղինակը այդ օտար տիրակալների անունները զետեղել է Անուշավանի անունից հետո՝ մինչև Սկայորդի: Ուրեմն աստղանիշը պետք է լիներ վերջին անվան վրա: Դա, կարծում ենք, գրիչների բույլ տված սխալ է, որը հաստատվում է նաև Մեքենուի «Պատմության» կազմում հանդես եկող «Խոստաբանության» հետևյալ հաղորդումով. «Այն ժամանակ Շամիրամը տիրեց Հայաստան երկրին և այնուհետև ասորեստանցիների թագավորները տիրեցին մինչև Սենեքերիմի մահը» (38, Ա, 25):

Պարզվում է, որ այդ օտարները, որոնց պատմիչը ասորեստանցի է համարում, հավանաբար, հարավից՝ Ասորեստանի կողմերից եկած լիներու պատճառով, երկրում տիրել են մինչև Սենեքերիմի մահը՝ մ.թ.ա. 681 թ. դեկտեմբերը: Այդ ժամանակ, ինչպես մեր պատմիչներն են նշում, հայոց առաջնորդ Սկայորդին ընդունում է Ասորեստանի հիշյալ թագավորի հայրասպան որդիներին: Ուրեմն աստղանիշը ցուցակում, իրոք, պետք է դրված լիներ Սկայորդու անվան վրա:

Այսպիսով՝ Մովսես Խորենացուն հայտնի է եղել, որ հայոց թագավոր Անուշավանից (մ.թ.ա. 8-րդ դարի սկիզբ) հետո՝ մինչև Սկայորդի (մ.թ.ա. 680 թ.), Հայաստանում իշխել են օտարները: Այդ ժամանակահատվածը համընկնում է ասորեստանցիների կողմից Ուրարտու կոչված պետության հիմնադրման, հզորության և անկման շրջանին: Իսկ ոչ մի հայ պատմիչ իր Հայաստան երկիր ներխուժած և իշխանություն հաստատած նվաճողների նոր պետական միավորը օտար անունով (Պարսկաստան, Բյուզանդիա, Թուրքիա, Ռուսաստան) երբևէ չի հիշատակել:

Ինչ վերաբերում է Մար Աբաս Կատինայի հաղորդած փաստերին, ապա դրանց հավաստիությունը հաստատվում է ասորաբաբելական և ուրարտական սեպագիր աղբյուրների համապատասխան տվյալների համեմատական քննությամբ (22, էջ 18-20): Ուրեմն Մովսես Խորենացու՝ հիշյալ աղբյուրից քաղած հայ թագավորների մասին տեղեկությունները, որոնք Ի. Դյակոնովը անհիմն կերպով համարում է լեգենդներ և առասպելներ (9, էջ 185, ծան. 296), վավերական են: Բերենք ընդամենը մեկ օրինակ Ի. Դյակոնովի սխալ վերլուծություններից: Նա գրում է, որ Բելը Բաբելոնի աստված է եղել, իսկ Մովսես Խորենացին նրան ներկայացնում է որպես թագավոր (9, էջ 185): Բել անունը ասուրերեն *bēlu* «տեր» բառն է, որը աստվածների և թագավորների համար շատ հաճախ է օգտագործվում որպես տիտղոս ոչ միայն ասուրական, այլ նաև խեթական սեպագիր աղբյուրներում: Դրա համար էլ հայ պատմիչը այդ թագավորի *Բել* տիտղոսից բացի հիշատակում է նաև նրա անձնանունը՝ *Նեբրուլթ*: Վերջինս, ինչպես փաստերի համեմատությունն է ցույց տալիս, Ասորեստանի արքա *Թուքուլթի-Նինուրթա* 1-ինի (մ.թ.ա. 1244-1208 թթ.) անունն է, որի առաջին բաղադրիչը ասուր. *tukultu* «հզոր» բառն է (որպես էպիտետ), իսկ երկրորդի քիչ ձևափոխված տարբերակն էլ՝ *Նեբրուլթ* բառածևը (22, էջ 19):

Ի. Դյակոնովը Մովսես Խորենացուն մեղադրում է նաև այն հարցում, որ նա ուրարտական բոլոր հուշարձանները վերագրել է Ասորեստանի թագուհի Շամիրամին (9, էջ 185, ծան. 296): Այս դեպքում, հնարավոր է, դեր են խաղացել ժողովրդական ավանդապատումները, որոնք այս կամ այն չափով պահպանվել են մինչև մեր օրերը (հմմ. «Շամիրամի ջրանցք»): Կամ էլ հայ պատմիչը գերադասել է թշնամի արքայի՝ Մենուայի փոխարեն նրա դաշնակից ու զորակից Ասորեստանի թագուհի Շամիրամին վերագրել Հայաստանում թե՛ ջրանցքի և թե՛ մյուս շինությունների կառուցումը, որոնցում, իրոք, նա մեծ մասնակցություն է ունեցել:

Ուրուատրի կամ Ուրատրի երկիրը, որը, ինչպես վերը նշեցինք, ընկած էր Տիգրիս և Խաբուր գետերի միախառնման անկյունում՝ ժամանակակից Ջուդի լեռան և դրան հարակից շրջաններում, տարածքով մեծ չի եղել: Այն, ըստ ասուրական սեպագիր աղբյուրների, ունեցել է ուր գավառ՝ 51 բնակավայրերով (7, N°2): Վանի նահանգ ներխուժած ուրուատրիների // ուրարտների թվաքանակն էլ մեծ չի եղել: Դա հաս-

տատվում է նաև Ուրարտուի թագավոր Սարգուրի 2-ի (մ.թ.ա. 8-րդ դար)՝ երկրում ռեֆորմ կատարելու մասին գրած արձանագրության մեջ ներկայացրած փաստերով: Նա հրամայում է վերացնել ուրուրյանի բնակչության, այսինքն, ինչպես գտնում են հետազոտողները, ուրարտների հարկերը: Դատելով թվարկված այդ տուրքերի տեսակներից ու քանակներից՝ հավաքվող եկամուտը շատ փոքր է եղել (23, էջ 296-298): Բնականաբար, դրանով հնարավոր չէր լինի հզոր պետություն ստեղծել ու պահել: Այնուամենայնիվ, թագավորը ուրարտներին՝ արտոնյալ բնակչությանը, ազատում է եղած ոչ մեծ հարկերից՝ ողջ ծանրությունը դնելով լեռնաշխարհի բնիկների ուսերին:

Հարց է առաջանում, սակայն, ինչպե՞ս կարողացան ոչ հզոր երկիր ունեցող փոքրաքանակ ուրարտները Վանի նահանգում պետական միավոր ստեղծել, գրեթե ողջ լեռնաշխարհը նվաճել և Ասորեստանի պես մի ուժեղ, սարսափազդու կայսրության հետ ոտք մեկնել: Հայաստանի հարավային նահանգում այդ ժամանակ օտարների, այսպես ասած, ընավորվելը, թերևս, դժվար չի եղել: Սակայն Բիայնիլի կամ Ուրարտու պետության հետագա հզորացումը փոքրաքանակ ուրարտներով անհավանական է թվում: Հարցի պատասխանը, կարծում ենք, կարելի է գտնել ուրարտական արձանագրություններում պահպանված փաստերի, թեկուզ ոչ շատ, վերլուծությամբ:

Ուրարտուի թագավոր Արգիշտի 1-ինը (մ.թ.ա. 8-րդ դար) Ուրմիա լճի հարավային ալվազանի Մանա և նրան հարևան Բուշտու երկրները նվաճելու համար հավաքագրում է միայն չարհանի, այսինքն՝ Խուրի երկրի զինվորներին (ուրարտ. չար-իլ «աշխարհ», այդ բառարմատի հոգնակին՝ չար-ձուե, *խանի*- (Hani-)՝ խուրիների երկրի անվան աստորական տարբերակն է, 23, էջ 296-298): Ուրեմն, կարելի է եզրակացնել, ուրարտական թագավորները լեռնաշխարհում արշավանքներ ձեռնարկելիս, որոնք գրեթե ամեն տարի կրկնվում էին, դարձյալ խուրի վարձկաններով էին հիմնականում զորամիավորումներ կազմավորում: Խուրի զինվորները, պետք է ենթադրել, գարնան վերջերին գալիս էին Վան, ստանում զենք ու զինամթերք, սննդեղեն, մասնակցում ուրարտ թագավորի արշավանքներին, իսկ աշնանը՝ վաճառում հասանելիք ավարն ու գերիներին և հարստացած՝ վերադառնում իրենց երկիրը: Սա հին աշխարհում թագավորների կողմից ընդունված գործելաոճ էր: Կարծում ենք՝ Ուրարտուի պատմական ասպարեզ գալուն և հզորանալուն նպաստել է նաև նրա իշ-

խանավորների որդեգրած մման ռազմավարությունը: Այդ իրավիճակը տևում է մինչև մ.թ.ա. 680 թ., երբ հայոց առաջնորդ Սկայորդին, իր կողմն է գրավում խուրիներին՝ դադարեցնելով նրանց զինվորների հոսքը դեպի Վան և ծնկի բերելով Վանի թագավորությունը՝ ազատագրում է Հայաստանի մեծ մասը (23, էջ 295-300):

Այստեղ անհրաժեշտ ենք գտնում հակիրճ անդրադառնալ մ.թ.ա. 6-րդ դարի հայոց պատմության որոշ չլուսաբանված հարցերի:

Ինչպես հայտնի է, պատմաբանների մի մասը գտնում է, որ հայերը, իբր, Վանի թագավորության կործանումից հետո են (մ.թ.ա. 6-րդ դար) Հայկական լեռնաշխարհում իշխանություն ձեռք բերել: Նրանք Երվանդ Սակավակյացին ներկայացնում են որպես հայոց առաջին թագավոր: Այսպիսի մոտեցմամբ, բնականաբար, նրա կողմից հայոց գահը ինչ-որ մեկից ժառանգելու հարցը այդ պատմաբանները չեն շոշափում (25, էջ 435-440): Մինչդեռ այդ ժամանակվա հայոց գահակալների վերաբերյալ հետաքրքիր փաստեր ենք գտնում Քսենոֆոնի «Կյուրոպեդիա» աշխատությունում:

Մեդիայի զորահրամանատար Կյուրոսը՝ Աժդահակի թոռը, գործով մտնում է Հայաստան, հանկարծակի շրջապատում հայոց թագավորի զորքին և հնազանդեցնելով՝ բանակցություններ վարում նրա հետ: Պատմիչը գրում է, որ նա Տիգրանի հայրն է, այսինքն՝ Երվանդ Սակավակյացը, ինչպես հայտնի է հայ պատմագրությանը: Կյուրոսի այն հարցին, թե հայոց արքան ինչքա՞ն հարստություն ունի, նա պատասխանում է. «Իմ կարողությունը այն հարստությունների հետ միասին, որ թողել է իմ հայրը, հաշվելով արծաթ դրամով՝ ավելի քան երեք հազար տաղանդ է» (42, III, I, 33): Այսօրվա միավորներով հաշված, դա ավելի քան 96 տոննա արծաթ արժողությամբ հարստություն է: Այն ժամանակվա համար սա պատկառելի թիվ է, որ կարող էր ունենալ միայն պետական միավորի տիրակալը: Ուրեմն Երվանդի գահը ոչ նորաստեղծ էր, ոչ էլ ինչ-որ մեկից գավթած, այլ՝ սեփական հորից ժառանգած: Իսկ ո՞վ էր Երվանդ Սակավակյացի հայրը: Այս հարցի պատասխանը գտնելուն մեզ օգնում է «Սասունցի Դավիթ» էպոսը, որում նկարագրվող դեպքերը շատ ավելի մեծ հնություն ունեն, քան, ինչպես ենթադրվում է, արաբական նվաճումները:

Ըստ վաղ միջնադարի հայ պատմիչների՝ Ասորեստանի թագավոր Մենեքերիմի որդիներ Սանասարն ու Բաղդասարը, սպանելով իրենց հո-

րը, երկրից փախչում են և ապաստան գտնում հայոց առաջնորդ Սկայորդու մոտ: Այդ հայրասպանությունը, ինչպես պարզել են մասնագետները, տեղի է ունեցել մ.թ.ա. 680 թ.: Այնուհետև Սկայորդին ուղքի է հանում հայերին տեղի օտար բռնակալների դեմ և ազատագրում Հայաստանի մեծ մասը նրանց գերիշխանությունից (22, էջ 140-143): Իսկ էպոսում ասվում է, որ Սանասարի ու Բաղդասարի՝ Հայաստան փախչելուց հետո Մեծ Միերը կռվում է Մարա Մելիքի դեմ և թոթափում է նրա լծից իր երկիրը: Մըսրըրը, ուրեմն, Վանի թագավորությունն է՝ Ուրարտուն, որի կրոնական կենտրոնը Մուսրու-ի անունով են, հավանաբար, հայերը այն կոչել: Այս դեպքում Մարա Մելիքը Վանի տիրակալ Ռուսա 2-րդն է, որի տիրապետությունից Սկայորդին ազատագրում է իր երկրի մեծ մասը (22, էջ 140-143): Ինչպես վկայում են հայ պատմիչները, Սկայորդու գավակ Պարույրը, շարունակելով հոր գործը, վերջնականապես դուրս է վճռում օտար բռնակալներին և Հայաստանում հաստատում իր գերակայությունը: Իսկ «Սասունցի Դավիթ» էպոսում ասվում է, որ Դավիթը, սպանելով Մարա Մելիքին (Ուրարտուի վերջին թագավոր), վերջ է դնում նրա տիրապետությանը մեր երկրում: Դավթի հետնորդը նրա որդին էր՝ Փոքր Միերը, որի ժամանակ Մարա երկիրը՝ Վանի թագավորությունը, արդեն գոյություն չուներ: Այսպիսով՝ Դավիթը Պարույրն է, իսկ Փոքր Միերը՝ նրա որդի Երվանդը (տե՛ս նույն տեղում): Վերջինս, ըստ Մ. Չամչյանի ժամանակագրական ցանկի, տիրել է չորս տարի՝ մեր կողմից կատարված թվագրությամբ՝ մ.թ.ա. 588-585 թթ.: Ուսումնասիրողները պարզել են, որ *Սակավակյաց* տիտղոսը վերաբերում է նրա կարճաժամկետ կառավարմանը: Երվանդին հաջորդող հայոց թագավորները նրա անունով իրենց կոչել են *Երվանդակյան*: Ինչպես պարզել են մասնագետները, Երվանդը հայոց գահը Սասունից՝ ծայրամասային գավառից, տեղափոխել է Վան, որը նրա անունով կոչվել է *Երվանդավան*: Դա ինքնին մեծ առաջխաղացում պետք է համարել հայոց քաղաքական կյանքում:

Պարույրը թագավորել է 49 տարի: Ուրեմն Երվանդը առաջացած տարիքում է գահը ժառանգել, ինչը վկայում է և այն, որ իր կենդանության օրոք նրա որդի Տիգրանը արդեն ամուսնացած էր: Պարույրը իր թոռ Տիգրանին, դեռ մանուկ հասակում ուղարկել է Մեդիայի արքունիք՝ ուսումնառության նպատակով, որտեղ էլ նա ընկերացել է Կյուրոսի հետ:

Երվանդ Սակավակյացից հետո հայոց գահը ժառանգում է նրա որդի Տիգրան 1-ինը (մ.թ.ա. 585-542 թթ.): Մովսես Խորենացին գրում է, որ նա «Մեր բնակության սահմանները ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերին»: Այսինքն՝ նա հայոց պետության սահմանները համապատասխանեցրել է ազգի բնակության տարածքին: Տիգրան 1-ինը, ըստ հայ պատմիչի, «Մեր ազգը բարձրացրեց, հարստացրեց», «հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողները՝ հաջող աղեղնավորներ, լախտերով կռվողները զինվեցին հաջող աղեղներով, մերկերը պատվեցին վահաններով և երկաթե զգեստներով» (32, I, իդ):

Տիգրանը, Մեդիան իր երկրի դաշնակիցը համարելով, քրոջը կնության է տալիս դրա տիրակալ Աժդահակին: Ամուսնության առաջարկությունը Աժդահակին էր, որի նպատակն էր այդ միջոցով կամ հաստատուն հարաբերություններ պահպանել Հայաստանի հետ, կամ մեջտեղից վերացնել հայոց թագավորին: Մարաց թագավորին խիստ անհանգստացնում էր Տիգրանի և Պարսկաստանի արքա Կյուրոսի հետ ունեցած սերտ դաշնակցությունը (32, I, իե): Աժդահակը Տիգրանուհուն իր արքունիքում Արյաց տիկին է հռչակում, իսկ հետո ջանում է նրան տրամադրել սեփական եղբոր դեմ: Սակայն թագուհին դրա մասին Տիգրանին տեղյակ է պահում: Աժդահակը դավադրության նպատակով հայոց արքային հրավիրում է սահմանի մոտ հանդիպելու: Տիգրանուհին եղբորը տեղյակ է պահում նրա մտադրության մասին: Դրանից հետո Տիգրան 1-ինը գործով մոտենում է Մեդիայի սահմանին և սպասում: Ապա մի կեպ փրկում է իր քրոջն ու հետո հարձակվում Աժդահակի բանակի վրա՝ պարտության մատնելով նրան (32, I, իթ):

Սակայն Գ. Տիրացյանը մեր պատմությանը վերաբերող դեպքերի այս նկարագրությունը համարում է վեպ, այսինքն՝ ոչ ճշմարիտ պատմություն: Այդ տեսակետը հիմնավորելու համար նա մատնացույց է անում վեպի մասին Մ. Աբեղյանի հետևյալ բնորոշումը. «Ի տարբերություն առասպելի, որը դիցաբանական բնավորություն ունի, վեպի նյութը պատմությունն է, իսկական, թե կեղծ», այնուհետև գրում է՝ «Վեպի մեջ պահպանված են պատմական անցքերի հուշերը, սակայն՝ ժամանակագրական մեծ խախտումներով: Բայց հին վեպը իր հեթին առասպելախառն է» (25, էջ 481): Այնուամենայնիվ, Գ. Տիրացյանը իր կարծիքը, ընդհանուր հայտարարություններից բացի, փաստերով ապացուցելու ոչ

մի քայլ չի կատարում: Տիգրան 1-ինի մասին Մովսես Խորենացու հաղորդումների մեջ չկա ոչ մի կեղծ բան, ժամանակագրական խախտում կամ առասպել: Ինչ վերաբերում է Աժդահակի երազներին, ապա դրանք առասպելներ չեն: Երազն ու առասպելը իրար հետ շփոթել չի կարելի:

Ժամանակին Հ. Գեյցերը այն տեսակետն է արտահայտել, որի համաձայն, իբր, Մովսես Խորենացին թյուրիմացաբար Կյուրոսի ժամանակակից Տիգրանին է վերագրել գովեստի այն խոսքերը, որոնք Տիգրան Մեծին են վերաբերում: Մ. Աբեղյանը, հետևելով նրան, գուգահեռներ է անցկացնում այս երկու հայ թագավորների մասին պատմիչի գրքում եղած գովեստների միջև (15, էջ 104-107): Երկու անձերի վերաբերող գովեստի խոսքերը ճնշող մեծամասնությամբ նույնն են լինում: Հետևաբար՝ դա չի կարելի բավարար փաստարկ համարել և երկու անձանց նույնացնել: Իսկ Տիգրան 1-ինի և Տիգրան Մեծի գործունեությունները, ինչպես ներկայացնում է Մովսես Խորենացին, միմյանց հետ բոլորովին չեն շփոթվում:

Մ.թ.ա. 553 թ. Պարսկաստանի թագավոր Կյուրոսը ապստամբում է Մեդիայի գերիշխանության դեմ: Մ.թ.ա. 550 թ. պարսիկները կատարյալ հաղթանակ են տանում, և կայսրության մեջ հաստատվում է Աքեմենյան տերության գերիշխանությունը: Մովսես Խորենացին գրում է, որ մարերի տիրապետությունը տապալելու գործում հայոց թագավոր Տիգրանը իր գործով աջակից է եղել պարսիկ թագավորին: Սակայն Տիգրանի մահից հետո (մ.թ.ա. 542 թ.) Կյուրոսը Հայաստանում վերացնում է տեղի թագավորական տոհմի իշխանությունը և իր եղբայր Թանոքսարեսին նշանակում այնտեղ սատրապ, որի կառավարումը տևում է մոտ երկու տասնամյակ: Կյուրոսը գոհվում է Միջին Ասիայում սկյութների դեմ պատերազմելիս (մ.թ.ա. 529 թ): Իրանի կայսրության գահը ժառանգում է նրա կրտսեր որդի Կամբյուսեսը: Նրա դեմ ծագում է ապստամբություն մոգ Գաումատայի գլխավորությամբ, որն իրեն ներկայացնում է որպես Կամբյուսեսի եղբայր Բարդիա: Մինչդեռ վերջինիս արքան սպանել էր տվել դեռևս մ.թ.ա. 525 թվականին՝ եգիպտական արշավանքի նախօրյակին: Սակայն Եգիպտոսից վերադառնալու ճանապարհին Կամբյուսեսի անակնկալ մահը (մ.թ.ա. 523 թ.) նպաստեց մոգ Գաումատայի նպատակների իրագործմանը, և նա դարձավ Աքեմենյան կայսրության

ասրապնդելու նպատակով, ենթակա բոլոր երկրներն ազատեց հարկերից և զինվորական ծառայություններից (29, III, 67): Սակայն Աքեմենյան թագավորական տոհմից մեկը՝ Դարեհը, մ.թ.ա. 522 թ. իր համախոհների հետ բացահայտում է մոգ Գաումատայի կեղծիքը, նրան գահընկեց անում ու տիրում գահին: Զաղաքական այս անկայուն վիճակից օգտվելով՝ Դարեհի դեմ ապստամբում են կայսրության ինը երկրներ, որոնց թվում և Հայաստանը: Վերջինս դեռ ոչ վաղ անցյալում էր զրկվել սեփական ազգի արքայատոհմից թագավոր ունենալու իրավունքից (մ.թ.ա. 542թ.)՝ այդպիսով կորցնելով նաև երկրի կիսանկախ կարգավիճակը: Դարեհի դեմ ամենամեծ դիմադրությունը հայերն են ցուցաբերում՝ հինգ անգամ ճակատամարտ տալով նրա ուղարկած զորքի դեմ: Նույնիսկ Արախս անունով մի հայ ապստամբություն է բարձրացնում նրա դեմ նաև Բաբելոնում: Հայերի զինված դիմադրության մասին մենք տեղեկություններ ենք քաղում եռալեզու սեպագիր արձանագրությունից, որ Դարեհը գրել է տվել Բեհիսթունյան կոչվող ժայռի վրա:

Պարսից թագավորը Դադարշիշ անունով զորահրամանատարի դեկավարությամբ Արմենիա՝ Հայաստան, զորք է ուղարկում (մ.թ.ա. 522թ.), որի դեմ հայերը ճակատամարտ են տալիս Ջուգա, ապա Տիգրա բնակավայրերի, այնուհետև Ուխիամա բերդի մոտ (33, §26-28): Հաջորդ տարվա գարնանը Դարեհը ստիպված է լինում Վահումիս անունով մեկին զորքով դարձյալ ուղարկել Արմենիա: Սակայն մինչև այդ երկիր հասնելը նրա դեմ հայերը ճակատամարտ են տալիս Ատրեստանում Իզալայի մոտ (33, § 29), ապա՝ իրենց երկրի Աուտիյարա գավառում (33, § 31): Հիշատակված վայրերի տեղի ճշգրիտ որոշելը մեզ կօգնի վերականգնելու այդ ժամանակվա Հայաստանի որոշ հատվածների տարածքային պատկերը:

Իզալան, ինչպես պարզել են հետազոտողները, գտնվել է Դիարբեքի-րի շրջանում: Այն հիշատակվում է նաև աստուրական սեպագիր աղբյուրներում (5, էջ 86): Ջուգա ավանը Ֆ. Յուստին նույնացնում է այժմյան Ջուգան բնակավայրի հետ՝ Ջուլամերկի մոտ: Նա գտնում է, որ Տիգրան ժամանակակից Տիլ ամրոցն է՝ Տիգրիս գետի ափին: Ուխիյամա բերդը մասնագետները հակված են որոնելու Կորճալ բնահանգում: Իսկ Աուտիյարան, ըստ Հ. Սանդալճյանի, նշված նահանգի Ալտուսն օվակոն է (31, էջ 58-59):

Ինչպես տեսնում ենք, պատմաբանների կարծիքով՝ Հայաստանի նշված չորս բնակավայրերը գտնվել են հետագայի հայկական Կործալք նահանգում՝ Բոհտան գետից անմիջապես հարավ և արևելք՝ Մեծ Զաքի ավազանում: Այդ տարածաշրջանը, սակայն, ըստ Հերոդոտոսի, Դարեհի ժամանակ մատիենների երկիրն էր՝ Մատիենեն: Այն բնակեցված էր միտանագիներով և չէր մտնում Արմենիայի կազմի մեջ (29, V, 52): Այսպիսով՝ նշված չորս տեղանունների տեղադրման մասին արտահայտված տեսակետները չեն հիմնավորվում: Ուստի մենք կարծում ենք, որ *Ջուզան* հետագայի Շատախի շրջանի (Վանա լճից անմիջապես հարավ) *Ջուզա* բերդն է, որի անունը կազմված է հին հայ. *զուզ* «հասալատ» արմատից և հուշում է բերդի ամուր, հաստատուն լինելու մասին: Տիգրան հավանաբար Վանի նահանգի Հեքյարի գավառի Տիգեր բնակավայրն է, որի անվան մեջ կարելի է առանձնացնել հին հայ. *տիկ* «գինու տիկ» բառը: Այն բարբառային *տիգ* ձևով հանդիպում է Շիրակի *Տիգնիս* բերդի, Կարսի մարզի *Տիգնիս* և Սյունիքի *Տիգեն* բնակավայրերի անուններում: *Ուխիսան* հավանաբար 1912 թ. կովկասյան ռուսական ռազմական շտաբի քարտեզում նշված Ճորոխի հովտի Ուկյան բնակավայրն է: Ենթադրելի է, որ այդ անունը բաղկացած է հին հայ. *ուխ* կամ *ուխի* «հեղեղատ» և *ամ*՝ «լի» (հմմ. *ամ-ալ* «լցնել») արմատներից: Իսկ *Աուտիյարա* գավառը, կարծում ենք, Վանի նահանգի Աղբակի շրջանն է: Այդտեղի *Ավդյուր* գյուղի անունը, հնարավոր է, պահպանել է գավառի հին անունը: Այս տեղադրումները ավելի հավանական են, քանի որ դրանք մ.թ.ա. 6-րդ դարում մտել են Հայաստանի կազմի մեջ:

Դարեհը, տիրանալով երկրի գահին և կարճ ժամանակում ճնշելով ապստամբությունները, մ.թ.ա. 521 թ. իր կայսրությունը, որն ընդգրկում էր ողջ արաբական թերակղզին, Եգիպտոսը, Եթովպիան, Լիբիան, Փոքր Ասիան, Հայաստանը, Անդրկովկասը, Ասորեստանը, Բաբելոնը, Միջին Ասիան, Աֆղանստանն ու Հնդկաստանը, բաժանում է քսան նահանգների: Դրանց շարքում 13-րդը և 18-րդը ներկայացրել են Հայաստանը: Հերոդոտոսի «Պատմության» մեջ գրված է. «Պակտյուիկեից, արմեններից և հարևաններից մինչև Եվքսինյանը ստացվում էր չորս հարյուր տաղանդ (հարկ). սա տասներեքերորդ նահանգն է» (29, III, 93):

Որոշ հետազոտողների կարծիքով՝ Պակտյուիկե երկիրը գտնվել է Վանա լճից հարավ՝ այժմյան Բոհտան գետի ավազանում (2, էջ 80): Ոմանք էլ այն նույնացնում են Կորդուքի հետ՝ Տիգրիսի և Ուրա Խաբուր

վտակի անկյունում (25, էջ 424): Այդ տարածքները, սակայն, Դարեհի ժամանակ, ինչպես վկայում է Հերոդոտոսը, ներկայացրել են Մատիենների կողմից, որը մտնում էր 18-րդ նահանգի կազմի մեջ (տե՛ս ստորև): Ուստի այդ տեղորոշումները չեն արդարացնում իրենց:

Բ.Հ. Հարությունյանը ենթադրում է, որ Պակտյուիկեն Կապադովկիայի արևելյան հատվածն է (27, էջ 79): Հերոդոտոսի «Պատմության» մեջ Դարեհի կայսրության վարչական բաժանման ցուցակում Պակտյուիկեն նշված է, իսկ Կապադովկիան՝ ոչ (29, III, 89-95): Սակայն աշխատության մյուս բաժիններում *Կապադովկիա* անունն է հանդիպում, իսկ *Պակտյուիկեն*՝ ոչ: Ուրեմն, կարելի է եզրակացնել, պատմահայրը այդ ցուցակը վերցրել է այլ աղբյուրից, որտեղ *Կապադովկիա*-ն փոխարինված է *Պակտյուիկե* անունով: Հերոդոտոսի գրքի հիշյալ ցուցակում գրված է. «Մատիենների, սասպեյրների և ալարոդների վրա սահմանված է երկու հարյուր տաղանդ հարկ. սա տասներեքերորդ նահանգն է» (29, III, 94):

Մասնագիտական գրականության մեջ իշխում է այն տեսակետը, ըստ որի՝ սասպեյրները զբաղեցրել են Ճորոխի, ալարոդները՝ Արաքսի ավազանները, իսկ մատիենները՝ Ուրմիա լճից հարավ և հարավարևմուտք ընկած տարածքները (25, էջ 152): Մատիենան գտնվել է Միդիայի, Հայաստանի և Ասորեստանի միջև: Ինչպես նշում է Հերոդոտոսը, այդ երկրով հոսում են չորս նավարկելի գետեր: Առաջինը Տիգրիսն է, երկրորդը և երրորդը՝ Մեծ և Փոքր Զաբերը, չորրորդը կոչվում է Գյունդես (այժմ՝ Դիալա, 29, V, 52 և 19, էջ 65):

Սակայն Բ.Հ. Հարությունյանը գրում է, թե մատիենների երկիրը չէր կարող մտնել Դարեհի կայսրության 18-րդ նահանգի կազմի մեջ (27, էջ 65-66)՝ հաշվի չառնելով Հերոդոտոսի վերը բերած տեղեկությունը, որը անտեսել չենք կարող: Ըստ երևույթին հեղինակը հենվել է պատմահոր այն վկայության վրա, ըստ որի՝ մատիենները ապրել են մեծ Փոքր Ասիայում՝ Հալիս գետի միջին ավազանում՝ կապադովկացիների, կիլիկեցիների և փռյուգիացիների հարևանությամբ (29, I, 72, 13, էջ 200-210): Բացի այդ, Հերոդոտոսը թույլ է տալիս անճշտություն՝ գրելով, որ Արաքս գետը բխում է մատիենների երկրից, որտեղից սկիզբ է առնում Գյունդեսը (29, I, 202): Միջդեռ հայտնի է, որ Արաքսը սկսվում է Բյուրակնի լեռներից:

Ալարոդների մասին Բ.Հ. Հարությունյանը գրում է, որ Հերոդոտոսից հետո նրանք անհետանում են տարածաշրջանի էթնիկ քարտեզից (28, էջ 65):

Օտար պատմիչների կողմից Հայաստանի մահանգների, գավառների և բնակավայրերի անունների չհիշատակելը կամ աղավաղելն ու թարգմանելը մեզ չպետք է թյուրիմացության մեջ գցեն: Դա դեռ չի նշանակում, թե տեղի բնակչությունը ընդհանրապես անհետացել է: Պտղոմեոսի կազմած Հայաստանի քարտեզի վրա (2-րդ դար) շատ քիչ տեղանուններ են ներկայացված հայերեն ձևով: Դրանց մեծ մասը կամ թարգմանված է, կամ էլ անճանաչելիորեն աղավաղված:

«Աստվածաշնչում» Երեմիա մարգարեն կոչ է անում Արարադի, Մինիի (Մանա երկիր՝ Ուրմիա լճի հարավային ավազանում) և Աշքենագի (Միդիայի սկյութաբնակ հատված) թագավորներին օգնել՝ Ասորեստանին ենթակա Բաբելոնի ապստամբությունը ճնշելու: Դա տեղի է ունեցել մ.թ.ա. 653-652 թթ.: Մովսես Խորենացին ուղղում է Երեմիայի հիշատակած *Արարադ* անունը՝ դարձնելով *Այրարատ*, այսինքն՝ *Հայկայան թագավորություն* (32, I, իբ): Հետագուտոդները սովորաբար *Արարադ* անվան տակ հասկանում են *Ուրարտուն*: Սակայն նշենք, որ վերջինս այդ ժամանակ կիմերների դաշնակիցն էր և Ասորեստանի թշնամին (3, էջ 327): Ուրեմն Երեմիա մարգարեի կոչը Վանի թագավորությանը վերաբերել չէր կարող: Այն ուղղված էր Ուրարտուի լծից ազատագրված Հայաստանի հատվածին՝ Այրարատի իշխանությանը: Ի դեպ, ինչպես նշվեց, այս տարածքը՝ Արեւմեայան կայսրության մեջ մտնող 18-րդ մահանգը, Հերոդոտոսը կոչում է *Ալարոդ* ձևով:

Մենք վերը արդեն նշեցինք, որ *Այրարատ* անունը, ինչպես գրում է Մովսես Խորենացին, առաջացել է *Արա Գեղեցիկի* անունից: Այն վկայված է նաև *Արայարտ* ձևով ու նշանակում է «Արայի մշակելի հող»: Ուրարատական սեպագիր աղբյուրներում այն հիշատակում են թարգմանաբար՝ *Էսիունի* անունով: Սեպագիր հուշարձաններում հիշատակվող այդ տարածքի տեղանունները բացատրվում են հայերենով (22, էջ 123-124): Ուստի գիտության մեջ տարածում գտած այն տեսակետը, որ ալարոդները ուրարտների հետնորդներն են, միանգամայն անընդունելի է:

Գ. Մելիքիշվիլին ժամանակին կարծիք է հայտնել, թե, իբր, Սպերը ընդգրկված է եղել Սև ծովի հարավ-արևելյան ափերը զբաղեցրած մեսիների տարածքի մեջ (10, էջ 111): Քսենոֆոնի «Անաբասիսում» մեսիների

կամ մոսխերի մասին տեղեկություններ չկան: Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ Մոսքիկեն հիշատակված է Կոլխիդայի կազմում, որը սահմանակից էր Արմենիային (39, էջ 29): Իսկ Ստրաբոնը գրում է, որ Մոսքիկյան լեռները գտնվել են Կոլխիդայի և Արմենիայի լեռների հարևանությամբ (39, էջ 75-77): Դա ժամանակակից Մեսիների լեռների արևելյան հատվածն է, որի արևմտյան մասը Ստրաբոնի մոտ հայտնի է *Կոլխիդա* անունով: Այս բոլորից հետևում է, որ Սպերը մեսիների զբաղեցրած տարածքից շատ հեռու է: Այն ընդգրկել է Ճորոխի ավազանը և չէր կարող մտնել մեսիների երկրի կազմի մեջ:

Բ.Հ. Հարությունյանը սասպեյրներին համարում է սկյութներ: Այդ կապակցությամբ հեղինակը վկայակոչում է Ապոլոնիոս Հռոդացուն (3-րդ դար), որը գրում է, թե ոմն Փենեոս Արգոնավորդների արշավանքի առիթով ասել է, որ վիզերներից վերև (արևելք) ապրում էին մակրոները, նրանցից այն կողմ՝ բելսիրների բազմամարդ ցեղը և անմիջապես հետո՝ սասպեյրները և միայն սրանցից այն կողմ՝ ռազմաշունչ կոլխերը (28, էջ 81): Ըստ Ապոլոնիոսի՝ սասպեյրները սկյութներ են, որոնք այդպես են կոչվել՝ իրենց երկրում առատությամբ հանդիպող *սասպեյրին* քարի անունից (28, էջ 82): Բ.Հ. Հարությունյանը, Ապոլոնիոսի հիշատակած կոլխերին թյուրիմացաբար նույնացնելով արևմտյան Վրաստանի կոլխերի հետ, եզրակացնում է, որ այդ սասպեյրները, որոնք սկյութներ են, նույն սասպեյրներն են (28, էջ 83): Վերջիններս, ինչպես հայտնի է, զբաղեցրել են Ճորոխի ողջ ավազանը: Քսենոֆոնը տասը հազար հույն վարձկան զինվորների հետ անցնում է այդ տարածքով՝ խալկոսների երկրի միջով 275 կմ (50 փարսախ), սակայն այնտեղ սկյութների բնակվելու մասին ոչինչ չի գրում (41, էջ 103): Հերոդոտոսը նույնպես, որը լավ տեղեկացված էր Առաջավոր և Միջին Ասիայի ու Եվրոպայի սկյութների մասին, իր աշխատության մեջ Ճորոխի ավազանում նրանց բնակվելու վերաբերյալ տեղեկություններ չի տալիս:

Ակնհայտ է, որ Բ.Հ. Հարությունյանը Տրապիզոնից անմիջապես արևմուտք ապրող կոլխերին նույնացրել է Վրաստանի արևմուտքի կոլխերի հետ: Նախ՝ նկատի պետք է ունենալ, որ հին հույն պատմիչները Ճորոխ գետը հիշատակում են Ապսարոս անունով (26, էջ 365, ծան. 16): Քսենոֆոնի «Անաբասիսում» վկայվում է, որ հույն զինվորները մահանջի ճանապարհին, խալկոսների երկրից դուրս գալով, մուտք են գործում Հարպասոս գետի հովիտը: Պետք է նկատի ունենալ, որ նրանք գնում

բարեփոխումը: Ուրեմն Ճորոխի (Ալասարոս) ավազանից դուրս են եկել բոլոր անկողնների շրջանում, որից հետո մտնում են ժամանակակից հարթ խո գետի հովիտը, որը հենց Հարապատուն է: Նրանք սկյութների երկրի սկիզբով հասնում են Գյումնիաս քաղաքը (41, էջ 103-104): Կարծում ենք՝ այն ժամանակակից Գյումնուշանեն է: Այնուհետև հույն զինվորները հասնում են Սև ծով: Նրանք, նպատակ ունենալով հասնել Տրապիզոն, որտեղ կարող էին նավեր վարձել և ուղևորվել Հունաստան, փոխում են իրենց ճանապարհը դեպի արևելք: Գյումնիասի շրջանից (սկյութների երկիր) հույները մուտք են գործում մակրոնների և ապա՝ կոլխերի երկիր ու հասնում Տրապիզոն: Սակայն նրանք այնտեղ չեն կարողանում գտնել համապատասխան քանակությամբ նավեր և նորից ծովի ափով շարժվում են դեպի արևմուտք (41, էջ 105, 107, 115):

Այսպիսով՝ Բ.Հ. Հարությունյանը, շրջանցելով Քսենոֆոնի այս տվյալները, այժմյան Խարշիտ գետի ավազանի սկյութներին, որոնց հին հույները հետագայում իրենց լեզվով վերանվանել են *սասպեյրներ*, նույնացնում է Ճորոխի ավազանի սասպեյրների, իսկ Տրապիզոնի շրջանի կոլխերին՝ արևմտյան Վրաստանի կոլխերի հետ: Վերջիններս իրարից բաժանված են մոտ 180 կմ տարածությամբ:

Հերոդոտոսը գրում է, որ պարսիկները ապրում էին մինչև հարավային ծովն ընկած տարածքում: Նրանցից հյուսիս բնակվում էին մեդացիները, հետո՝ սասպեյրները և ապա՝ կոլխերը (29, IV, 37): Իսկ նրա «Պատմության» մեկ այլ բաժնում գրված է. «Կոլխիսից Մեդիա ավելին չէ ճանապարհը, բայց նրանց միջև ապրում են սասպեյրները» (29, I, 104): Բ.Հ. Հարությունյանը այս փաստերից եզրակացնում է, որ սասպեյրները զբաղեցրել են շատ մեծ տարածք՝ Կոլխիդայից մինչև Մեդիա՝ Արաքս գետը (28, էջ 80): Սակայն չպետք է մոռանալ Հերոդոտոսի՝ վերը բերած երկրորդ հաղորդումը, որի համաձայն Կոլխիդայից Մեդիա «ավելին չէ» ճանապարհը, այսինքն՝ կարճ է: Իսկ դա նշանակում է, թե սասպեյրների զբաղեցրած տարածքը ոչ թե ձգվել է մինչև Արաքսի միջին ավազանը, այլ մինչև ալարոդների երկիրը, որն այդ ժամանակ գտնվել է Մեդիայի ազդեցության ոլորտում: Դա Մարաստանի գերիշխանության ժամանակաշրջանն էր: Այդ նույն ձևով Հերոդոտոսը գրում է, որ Մեդիայի և Լյուդիայի միջև սահմանը Հալիս գետն է եղել: Դա մարերի ազդեցության ոլորտի սահմանն է, որի մեջ մտել է նաև Հայաստանը:

Բ.Հ. Հարությունյանը, կարծում ենք, վերը բերած փաստերը ոչ ճիշտ մեկնաբանելով՝ եզրակացնում է՝ իբր սասպեյրները զբաղեցրել են Կովկասից անմիջապես հարավ ընկած տարածքները՝ Վրաստանը և Ադվանքը՝ մինչև Կուր գետը՝ արևմուտքում սահմանակցելով Կոլխիդային: Նրա կարծիքով՝ դա Դարեհի կայսրության 18-րդ նահանգն է (28, էջ 82): Այս տեսակետը մեզ չի համոզում, քանի որ հեղինակը այն հիմնավորելու համար ոչ մի ապացույց չի բերում: Ակնհայտ փաստ է, որ 18-րդ նահանգի կազմի մեջ մտել են նաև ալարոդները՝ Արաքսի ավազանի բնակիչները, և Ուրմիա լճից հարավ ու հարավ-արևմուտք ապրող մատիենները (տե՛ս նույնը):

Կարծում ենք՝ *Սպեր* քաղաքի անունը հին հունարենի *σπεῖρα* «ոլոր, գալար» բառն է: Հավանաբար պատմահայրը թարգմանել է Խաղտիքի կենտրոնական քաղաքներից մեկի անունը, որը հայերենում ունեցել է այդպիսի իմաստ: Դա, թերևս, Սպերի մոտակայքում գտնվող միջնադարյան *Կոս* բնակավայրն է, որի անունը հին հայերենում նշանակում է «ոլոր» (հմմ. *կանել* «ոլորել»):

Հետագայում Մովսես Խորենացին և մյուս հայ պատմիչները, *Սպեր* տեղանունը վերցնելով հին հունական գրավոր աղբյուրներից, այն օգտագործել են իրենց աշխատություններում: Այդ նույն ձևով հին հույները Հայաստանի *երասիւր*-ը իրենց երկրի մի գետի անունով վերանվանել են *Արաքս*, որը նույնպես հայերը վերցրել են նրանցից:

Մ.թ.ա. 6-րդ դարում Սպերը եղել է ողջ Ճորոխի ավազանի կենտրոնը, որի անունով էլ Հերոդոտոսը կոչել է այդ տարածաշրջանի բնակիչներին՝ *σπεῖρα* (հին հուն. *σπ*- մասնիկով)՝ «սասպեյրներ»: Այդ տարածքը հայկական էթնոսով բնակեցված լինելու մասին են վկայում խեթական, ասսորական և ուրարտական սեպագիր արձանագրություններում հիշատակված տեղանունները, որոնք հայերեն արմատներից են կազմված:

Բ.Հ. Հարությունյանի կարծիքով՝ Դարեհի կայսրության 19-րդ նահանգը ձգված է եղել մինչև Վրաստանի Սուրամի լեռները և հյուսիսում հասել է Կովկասի լեռնաշղթային (28, էջ 100-101): Այսինքն՝ հեղինակը արևմտյան Վրաստանի կոլխերին և մոսխերին, ինչպես նաև Հայաստանի Խաղտիք նահանգը, որը գտնվել է Տրապիզոնի և Բաթումի միջև, մտցնում է 19-րդ սատրապության կազմի մեջ: Հերոդոտոսը գրում է, որ այդ վարչաքաղաքական միավորի մեջ ապրել են մոսխերը, տիբարենները, մակրոնները, մոսսինոյկները և մարերը (29, III, 94):

գլխի վերը նշվեց, Քսենոֆոնը հույն զինվորների հետ, սկյութների դեմ (այժմյան Խարչիտ գետի ավազան) հասնելով Սև ծով, թեքվում է գլխի արևմուտք և, անցնելով մակրոնների ու կոլխերի երկրներով, հասնում Տրապիզոն: Սակայն այդ քաղաքում նա չի կարողանում ձեռք բերել համապատասխան քանակությամբ մավեր՝ տասը հազար վարձկան զինվորներին Հունաստան հասցնելու համար: Ուստի նա հետ է դառնում ու գնում դեպի արևմուտք: Անցնելով Կերասունդ քաղաքը (այժմ՝ Գիրեսուն), որը նույնպես Սինոպի գաղութն էր կոլխերի երկրում, Քսենոֆոնը հասնում է մոսսինոյկների, այնուհետև տիբարենների երկիր, հետո ժամանում Կոտյուորա քաղաք (այժմ՝ Օրդու, 41, էջ 115, 117, 121):

Հեկաթեյ Միլեթացու (մ.թ.ա. 6-րդ դար) վկայությամբ մոսխերը կոլխական ցեղ են եղել (12, էջ 208): Հետևաբար Դարեհի բաժանմամբ՝ 19-րդ նահանգի կազմում Հերոդոտոսի հիշատակած մոսխերը Քսենոֆոնի նշած կոլխերն են, իսկ մարերը՝ ժամանակակից Գյումուշանեի շրջանի սկյութները, որոնք իրանական ժողովուրդ են: Դրանք տիբարենների, մակրոնների և մոսսինոյկների հետ բնակվել են, ինչպես կարելի է եզրակացնել Քսենոֆոնի հաղորդումներից, Տրապիզոնից մինչև Օրդու՝ Սև ծովին առընթեր տարածքը, որը 19-րդ նահանգն է: Այն իր մեջ չի ընդգրկել ո՛չ Խաղտիքը և ո՛չ էլ արևմտյան Վրաստանի կոլխերի ու մոսխերի երկիրը: Դա հաստատում է նաև Հերոդոտոսի ներկայացրած այն տվյալը, որ Դարեհի 13-րդ նահանգը ձգվել է մինչև Եվքսինյան՝ Սև ծովը (29, III, 93), այսինքն՝ իր մեջ ներառել է նաև Խաղտիքը: Իսկ արևմտյան Վրաստանի կոլխերը, ըստ պատմիչի, չեն մտել որևէ նահանգի կազմի մեջ և տարեկան նվերներ են մատուցել Դարեհին (29, III, 97):

Անդրադառնալով այն հարցին, թե ինչո՞ւ Դարեհը Հայաստանը բաժանեց երկու նահանգների: Հիմնական պատճառը, կարծում ենք, ապստամբ երկիրը իրեն ավելի հեշտ հնազանդեցնելն էր («բաժանիր, որ տիրես» սկզբունքով): Հիշենք, որ Դարեհի դեմ Արմինայի (Հայաստանի) ապստամբությունները ճնշելուց հետո է տեղի ունեցել այդ բաժանումը, որը, սակայն, ինչպես ցույց են տալիս փաստերը, այդպես էլ իրականություն չի դարձել: Այսպես. մ.թ.ա. 520 թ. պարսից թագավորը Բեհիսթունի ժայռի վրա գրել է տալիս իր կատարած գործերի մասին հին պարսկերեն, բաբելերեն և էլամերեն լեզուներով մի ծավալուն սեպագիր արձանագրություն, որտեղ թվարկված՝ իրեն ենթակա երկրների շարքում Հայաստանը ներկայացված է որպես մեկ առանձին միավոր: Կայսրության

հաջորդ գահակալ Բսերքսեսի (մ.թ.ա. 485-465 թթ.) «Դևերի մասին» կոչվող արձանագրության մեջ իրեն ենթակա 26 երկրների շարքում նույնպես Հայաստանը ներկայացված է որպես մեկ միասնական երկիր (12, էջ 119): Այդ են վկայում նաև Քսենոֆոնի «Անաբասիս» աշխատությունում առկա հետևյալ փաստերը: Միդիայից դեպի Կարդուխների երկիր, ապա՝ Արմենիա հույն զինվորների նահանջող բանակի «գորավարները որոշեցին, որ պետք է իջնել լեռների միջով դեպի կարդուխների երկիրը, քանզի ասել էին, թե նրանց երկրով անցնելուց հետո կհասնեն Արմենիա, որին իշխում էր Օրոնտասը, և որը մեծ էր ու հարուստ» (41, էջ 81): Իսկ դրա թագավորին ենթարկվում էր նաև արևմտյան Արմենիայի կառավարիչ Տիրիբազոսը, որի ղեկավարած վարչաքաղաքական միավորը Արմենիայի կազմի մեջ է եղել (41, էջ 93): Այսինքն՝ Հայաստանը, որ «մեծ էր ու հարուստ», իր և՛ արևմտյան, և՛ արևելյան հատվածներով մեկ պետական կազմավորում է եղել: Ուրեմն, կարելի է ենթադրել, Դարեհի դեմ հայերը զենքը վայր են դրել այն պայմանով, որ կայսրը ճանաչի Հայաստանում հայ թագավորական տոհմի շարունակական իշխանությունը, հետևաբար՝ նաև Հայաստանի տարածքային ամբողջականությունը: Կարծում ենք՝ այդպես էլ եղել է, ինչպես վկայում են վերը բերած փաստերը:

Դարեհ 1-ից սկսած՝ Հայաստանը միջազգային ասպարեզում հանդես է գալիս որպես Աքեմենյան կայսրության մեջ մտնող պետական մեկ միասնական միավոր: Դա տևում է մինչև մ.թ.ա. 331 թ., երբ Ալեքսանդր Մակեդոնացին Գավգամելայի մոտ իր զորքով պարտության է մատնում Դարեհ 3-րդի բանակին և վերջ դնում այդ կայսրության գոյությանը:

Նշված ժամանակահատվածում Հայաստանի տարածքային բնութագրի և քաղաքական կարգավիճակի վերաբերյալ մեր տեսակետը հաստատվում է նաև Մովսես Խորենացու և Մ. Չամչյանի ներկայացրած տվյալներով:

Մեր պատմահայրը գրում է, որ Տիգրան 1-ինից հետո հերթականությամբ իշխել են Վահագնը, Առավանը, Ներսեհը, Ջարեհը, Արմոգը, Բայզանը, Վանը և Վահեն: Վերջինս, ըստ հայ պատմիչի, գոհվել է Ալեքսանդր Մակեդոնացու դեմ Դարեհ 3-րդի զորքի մղած ճակատամարտի ժամանակ (32, I, լա): Մ. Չամչյանը տալիս է այդ թագավորներից յուրաքանչյուրի իշխանության տևողությունը. Վահագնը իշխել է 27 տարի (ըստ մեր կողմից վերականգնած թվագրման՝ մ.թ.ա. 523-497 թթ.),

Առավանդ՝ 19 տ. (մ.թ.ա. 496-478 թթ.), Ներսեհը՝ 35 տ. (մ.թ.ա. 477-443 թթ.), Ջարեհը՝ 46 տ. (մ.թ.ա. 442-397 թթ.), Արմոզը՝ 9 տ. (մ.թ.ա. 396-388 թթ.), Բայգամը՝ 14 տ. (մ.թ.ա. 387-374 թթ.), Վանը՝ 20 տ. (մ.թ.ա. 373-354 թթ.) և Վահեն՝ 23 տ. (մ.թ.ա. 353-331 թթ., 34, Ժամանակագրություն, էջ 34-35): Իսկ այսօր պատմաբանները, առանց լուրջ փաստարկումների, չեն ընդունում Մովսես Խորենացու հիշատակած այդ թագավորներին և դրանց վերաբերող ժամանակագրական տվյալները: Սակայն փաստերը այլ բան են ասում:

Նշված թագավորների իշխանության ժամանակահատվածների ընդհանուր գումարը 193 տարի է կազմում: Մոտավորապես նույնքան (մեկ տարվա տարբերությամբ) ժամանակ է ընկած Գավգամելայի ճակատամարտի (մ.թ.ա. 331 թ.) և Դարեհի գահ բարձրանալու (մ.թ.ա. 522 թ.) թվականների միջև: Հետևաբար՝ Վահագնը Հայաստանի տիրակալ է դարձել մոգ Գուամատայի օրոք (մ.թ.ա. 523 թ.), երբ վերջինս հարկերից ու զինվորական պարտավորություններից երկու տարով ազատում է իր համախոհներին: Ուստի, պետք է ենթադրել, որ հայերին իր կողմը գրավելու ակնկալիքով նա Թամարասարեն վերակացուի փոխարեն Վահագնին է ճանաչել որպես Հայաստանի թագավոր:

Հետևելով դեպքերի ժամանակագրական թվագրությանը՝ կարելի է նկատել, որ փաստորեն Վահագն էր հայոց զորքով հինգ ճակատամարտ տվել Դարեհի ուղարկած զինվորական ուժերի դեմ և դրանով ստիպել նրան ճանաչելու հայոց թագավորներին՝ իրենց երկրի գահի վրա: Չի բացառվում, որ այդ բախտորոշ պահին Վահագնի հերոսական կռիվներից հետո է հայ ժողովուրդը աստվածացրել նրան, ինչպես սովորաբար պատահում է: Իսկ հայ պատմագրության մեջ վերջին հարյուրամյակի ընթացքում զարմանալիորեն մոռացվել է Վահագնի իրական անձը և ներկայացվել որպես աստված:

Քսենոֆոնը «Անաբասիսում» տալիս է իրենց անցած ճանապարհների չափերը: Հին հույները կարողութների երկրից անցնում են Կենտրիտես գետը և մտնում Արմենիա: Ինչպես հետազոտողները պարզել են, դա հայկական Ջերմն է՝ այժմյան Բոհտանը: Այդտեղից գնալով 82, 5 կմ (15 փարսախ)՝ նրանք հասնում են Տիգրիսի ակունքին (41, էջ 92-93): Հ. Մանանդյանը գտնում է, որ նրանց ճանապարհի այդ հատվածը ընկած էր Բոհտանից սկսած՝ Սասունի միջով մինչև Տիգրիսի ակունքը (31, էջ 68): Հեղինակի նշած տարածությունը քարտեզի վրա ուղիղ գծով մոտ

160 կմ է, այնինչ Քսենոֆոնի հիշատակած ուղին ընդամենը 82, 5 կմ է: Հավանաբար շփոթության տեղիք է տվել տեքստում «Տիգրիսի ակունք» արտահայտությունը: Մինչդեռ պետք է նկատի ունենալ, որ հին հույները, ինչպես պարզվում է, «ակունք» ասելով հասկանում էին ոչ թե գետի ամենաերկար մասի, այլ ամեն մի վտակի սկիզբը: Իսկ Բոհտանից մինչև նրա հյուսիսային թևի սկիզբը՝ ժամանակակից Բիթլիսի մոտ, ուղիղ գծով 80 կմ է, որը համարյա նույնանում է Քսենոֆոնի նշած 82, 5 կմ-ին (15 փարսախ): Այսինքն՝ հին հույն վարձկանները գնացել են այդ ճանապարհով:

Այնուհետև նրանք Տիգրիսի՝ նշված ակունքից անցնում են ևս 82, 5 կմ (15 փարսախ) և հասնում Տելեքոս գետը (41, էջ 93): Այն, ինչպես հետազոտողներն են գտնում, Մեղրագետն է՝ այժմյան Կարասուն՝ Մուշից քիչ դեպի հյուսիս-արևելք: Եթե նկատի ունենանք Քսենոֆոնի վերոհիշյալ ճանապարհի երկարությունը, ապա Տիգրիսի ակունքից (Բիթլիսի մոտ) նրանք հասել են Արածանին՝ Մեղրագետի խառնվելու տեղը, որը ուղիղ գծով 80 կմ է և մոտ է 15 փարսախին՝ 82, 5 կմ-ին:

Այդտեղից վարձկանները անցնում են ևս 82, 5 կմ (15 փարսախ) և հասնում ձյունառատ վայրեր: Այնուհետև նրանք գնալով ևս 82, 5 կմ (15 փարսախ)՝ հասնում են Եփրատ գետի ակունքին (41, էջ 93-95): Մեղրագետի՝ Արածանուն խառնվելու տեղից մինչև Եփրատի ակունքը՝ Երզրումից քիչ դեպի հյուսիս, հեռավորությունը 160 կմ է, որը քիչ տարբերությամբ համընկնում է Քսենոֆոնի նշած այդ ճանապարհի 165 կմ երկարությանը (30 փարսախ): Ուրեմն հին հույները գնացել են մոտավորապես այժմյան Մուշ-Հասանկալե ճանապարհով: Սակայն Հ. Մանանդյանը հույն զինվորների անցած ճանապարհի այդ հատվածը քարտեզի վրա գետեղում է Մուշի, Ալաշկերտի և Երզրումի միջև, որն ուղիղ գծով 320 կմ է և գրեթե երկու անգամ գերազանցում է Քսենոֆոնի նշած 165 կմ-ը:

Եփրատի ակունքի շրջանում հույն վարձկանները չեն կարողանում լեռնային ձյունառատ տարածքը հաղթահարել և ուղիղ դեպի հյուսիս տանող կարճ ճանապարհով հայտնվել ճորոխի հովտում: Ուստի նրանք ստիպված են լինում շարժվել դեպի արևելք՝ մտածելով, որ միայն գետերի հովիտներով հնարավոր կլինի ձմեռվա պայմաններում ճանապարհ գնալ: Այդպես նրանք դուրս են գալիս Երասխի վերին հոսանքի շրջան՝ Փասիս գետի մոտ (41, էջ 99): Առաջ ընթանալով 55 կմ՝ Քսենոֆոնը իր

զինվորների հետ հասնում է մի լեռնանցքի, որը, կարծում ենք, այժմյան Շիպեկ բնակավայրի անցուղին է, որտեղով նրանք մուտք են գործում տառիների երկիր՝ այժմյան Օլթի գետի ավազան, և այնտեղով անցնում 167, 5 կմ (35 փարսախ) : Այդտեղից վարձկանները մտնում են Ճորոխի հովիտ՝ խալյուբների երկիր, և մինչև նրա ակունքները կտրում ևս 275 կմ ճանապարհ (50 փարսախ, 41, էջ 101-103):

Քսենոֆոնը գրում է, որ Կարդուխների երկրից Արմենիա մտնելիս հին հույները կարողանում են մարդերից և խաղայներից կազմված զորամիավորումների հետ ընդհարվելուց խույս տալ: Երասխի վերին հոսանքի շրջանում նրանք հանդիպում են փասյաներին, որից հետո այժմյան Օլթիի հովտում՝ տառիներին և ապա Ճորոխի ավազանում՝ խալյուբներին: Գ. Տիրացյանի կարծիքով՝ մարդերը իրանական ծագում ունեն, տառիները՝ խուրիական, իսկ փասյաններն ու խաղայները կամ խալյուբները, թերևս, քարթլեական ցեղերն են եղել (25, էջ 455): Ըստ նրա՝ Քսենոֆոնը, որը հույն զինվորների հետ Արմենիա է մտել՝ Կենտրիտես (ներկայիս Բոհտան) գետն անցնելով, և դուրս եկել Ճորոխի ավազանով՝ խալյուբների երկրով, ողջ ճանապարհին հայերի չի հանդիպել: Այդ դեպքում, հարց է առաջանում, ինչո՞ւ է հույն պատմիչը երկիրը կոչել *Արմենիա*:

Փորձենք ավելի հանգամանորեն քննել Քսենոֆոնի հիշատակած այդ ցեղերի անունները:

Ստրաբոնը, որը ծնվել էր Փոքր Ասիայի Ամասիա քաղաքում (մ.թ.ա. I-ին դար) ու շատ լավ գիտեր տարածաշրջանը, այդտեղի ցեղերի մեջ, ինչպես նշում է Գ. Մելիքաշվիլին, չի հիշատակում *խալյուբ* անունով որևէ էթնիկ միավոր: Դրա փոխարեն նույն տարածքի ժողովրդին նա կոչում է *χαλδοι* «*խալդեր*»: Հետագայում *խալդ* տերմինը հայկական և բյուզանդական գրավոր աղբյուրներում կիրառվել է տարածաշրջանի այս կամ այն հատվածը կոչելու համար (10, էջ 71): Այն, կարծում ենք, հին հայ. *խաղտ-ել* «*հոգել, կցել*» բայի արմատն է, որից և կազմված է *խաղտիք* տեղանունը: Հին հույները դրա բնակիչներին *խալդեր* են անվանել՝ ամենայն հավանականությամբ, նակտի ունենալով նրանց մետաղագործությամբ զբաղվելը: Իրոք, դեռևս այն ժամանակ Խաղտյաց լեռները հարուստ են եղել մետաղի հանքերով: Նշված արմատը հանդիպում է Երզրումի շրջանի *խաղտառիճ* (հմմ. *առիճ* «գյուղ»), Սյունիքի *խաղտիք* և այլ հին հայկական տեղանունների մեջ: Իսկ հին հունարեն

χαλδοι բառը նշանակում է «պողպատ»: Այսպիսով, կարելի է եզրակացնել, հին հույն պատմիչները իրենց աշխատություններում *խալյուբ* անունը, առանց որևէ էթնիկական բովանդակության, օգտագործել են մետաղագործությամբ զբաղվող մարդկանց խմբերի համար:

Անանիա Շիրակացու «Աշխարհացույցում» *խաղտիքը* վկայված է նաև *Ճանիվ* անունով (21, էջ 64): Վերջինիս մեջ առկա է հին հայ. *ճան* «հող, ճան» արմատը՝ գործիական հոլովի *-իվ* վերջավորությամբ, որը հաճախ է հանդիպում հայոց տեղանունների մեջ: Այս հանգամանքը նույնպես հուշում է տեղի մետաղագործության՝ *հողելու, զողելու* մասին (հմմ. 10, էջ 72):

Քսենոֆոնի հիշատակած *մարդերի* անունը, կարծում ենք, կազմված է հնդեվրոպական ծագումով հայերեն *մարդ* «մարդ էակ» արմատից, որը հանդիպում է Բարձր Հայքի *Մարդ-աղի* (*-ալի* // *-աղի* ածանցով և նշանակել է, հավանաբար, «մարդաշատ»), Վասպուրականի *Մարդաստան* հին գավառների և Խնուսի շրջանի *Մարդ* բնակավայրի անուններում: Հետևաբար հիշյալ մարդերը, հնարավոր է, Մարդաղի գավառի հին բնակիչներն են եղել: *Մարդ* ցեղանվանը հանդիպում ենք նաև Հերոդոտոսի աշխատությունում: Բայց դա պարսկական քոչվոր մի ցեղ է, որի զբաղեցրած տարածքները չեն համընկնում Քսենոֆոնի նշած Արմենիային (29, I, 125): Ի դեպ, *մարդ* բառը և՛ հայերենում, և՛ պարսկերենում միևնույն ծագումն ու հնչումն ունեն:

Երասխի վերին հոսանքի շրջանի Քսենոֆոնի հիշատակած փասեանները, ամենայն հավանականությամբ, հին հայկական Բասեանք գավառի բնակիչներն են: Այդ անունը կազմված է հին հայ. *բաս* բայարմատից (հմմ. *բաս ածել* «զատել»): Նշված տարածքը գտնվել է Երասխի և Եփրատի ջրաբաժանի վրա, որի պատճառով էլ կոչվել է այդպես: Խարբերդի նահանգի *Բասու* հին բնակավայրը կազմված է նույն *բաս* արմատից: Դրա *զատ* հոմանիշը, որը, ինչպես նշում է Հ. Աճառյանը, ունի *զ*-նախդիրը և *հատ* «հատված» բառի *-ատ* տարբերակը, հանդիպում է Երզնկայի գավառի *Չատ*, Դերսիմի շրջանի *Չատի* և Ալաշկերտի *Չատկան* (*-կան* ածանցով) հին բնակավայրերի անուններում:

Հին հույների հիշատակած *Τάοχοι* «*տառիսներ*» անունը վերցված է այդ տարածաշրջանի ուրարտ. *Diau(e)hi* (*Դիաուիսի*) ձևից: Վերը մենք նշեցինք, որ *Դալանին* կամ *Դալանին* (հայկ. *Տալք*) կոչվել է *Տալոյք* քար բերդի անունով, որը կառուցված է եղել ամուր ժայռի վրա: Դրանում առկա է հին հայ. *դալ* «կարծր» արմատը և *-անի* ածանցը:

Այսպիսով՝ Քսենոֆոնի հիշատակած Արմենիան, ինչպես ցույց են տալիս այդ երկրի ցեղանունների ստուգաբանությունները, բնակեցված է եղել հայերով: Յուրաքանչյուր գավառի բնակիչները կոչվել են տվյալ տեղանվամբ, ինչպես արվում է և այսօր:

Քննության առնենք հին հույն աշխարհագիր Ստրաբոնի (1-ին դար) Հայաստանի սահմաններին վերաբերող հետևյալ հաղորդումը. «Պատմում են, թե Հայաստանը նախապես փոքր լինելով՝ աճել է Արտաքսիասի և Ջարիադրեսի միջոցով... Երկուսն էլ աճեցին՝ շրջակա ազգերից հողեր գրավելով. մարերից Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան, իբերներից՝ Պարիադրես լեռան ստորոտները, և՛ Խորզենեն և՛ Գոգարենեն, որը գտնվում է Կուրի մյուս կողմը, խալյուրներից և մոսսինոյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն, որոնք Փոքր Հայքին սահմանակից են և կամ նրա մասն են կազմում, կատաոններից՝ Ակիլիսենեն և Անտիտավրոսի շրջանը, ասորիներից՝ Տամոնիտիսը, ուստի բոլորը միալեզու են» (39, IX, 14, 5):

Պատմիչի նշած Պարիադրեսը վերաբերում է այժմյան Մեսիսեթի լեռների, քանի որ դրանց հարավային հարևաններն են Խորզենեն՝ Կղարջքը և Գոգարենեն՝ Գուգարքը: Ուստի տվյալ Պարիադրեսը չի կարելի շփոթությամբ նույնացնել Պարիսար լեռների հետ, որոնք նույնպես հույն պատմիչների մոտ այդ անունով են հիշատակված: Ինչ վերաբերում է «Կուրի մյուս կողմում գտնվող Գոգարենենին», Ստրաբոնի ծննդավայր Փոքր Ասիայի համեմատությամբ, իրոք, այն գտնվել է Քուռ գետի՝ նրա հարավից հյուսիս հոսող վերին հոսանքի մյուս կողմում:

Գ. Սարգսյանը, հենվելով Մովսես Խորենացու և մյուս հայ պատմիչների հաղորդած տվյալների վրա, ցույց է տվել, որ Արտաշեսը վերանվաճել է (մ.թ.ա. 189թ.) ավելի վաղ Վրաստանի կողմից գրավված տալաժքները, որոնք դեռևս Երվանդունիների ժամանակ Հայաստանի կազմում էին գտնվում (25, էջ 530-534): Դրանում ավելի համոզվելու համար դիմենք այլ փաստերի: Խորզենեն գավառը հին հայկական Խործեանքն է: Այդ տեղանվան մեջ առկա են հին հայ. *խորդ* «խորդ ու բորդ, անհարթ մակերես» բառը և *-եան* ածանցն ու *-ք* հոգնակերտը, նշանակել է «անհարթ մակերեսով տարածք»: Այդ արմատը հանդիպում է նաև Չորրորդ Հայք նահանգի *Խործեանք* գավառի, Տարոնի *Խործավանք* բնակավայրի և Չըլդըր լճի հյուսիսի *Խործյան* լեռան անուններում: *Խորդ* ձևով այն առկա է Երզրունի գավառի *Խորդա*, Խարբերդի *Խորդման* (**խորդումն*,

սեռ. հոլ. **խորդման*) և Սյունիքի *Խորդյանց* հին տեղանուններում: Նշենք նաև, որ *դ/ժ* հերթագայությունը հին հայերենին բնորոշ է եղել (հմմ. *խանդել* և *խանձել*, *բարդել* և *բարձել*, *հորդել* և *հորձանք*):

Իսկ *Գոգարենեն* անվան մեջ առկա է հին հայ. *գոգ* «գոգավոր» բառը: Անունը հուշում է, թե այդ նահանգը գտնվել է գոգավոր տեղում: Իրոք, այն տարածված է եղել Փոքր Կովկասյան լեռնաշղթայի հյուսիս-արևելյան փեշերին: Այդ արմատը հանդիպում է Սպիտակի շրջանի *Գոգ-ա-րան*, Ախալքալաքի *Գոգ-ա-շեն* հին բնակավայրերի և Այրարատ նահանգի *Գոգ-հովիտ* (*Կոգովիտ*) գավառի անուններում:

Ի դեպ, ո՛չ Ստրաբոնը և ո՛չ էլ մեկ այլ հին հույն հեղինակ չունեն որևէ վկայություն, որի համաձայն հայերից առաջ այդ տարածքները կրել են վրացական անուններ, որոնք, իբր, մոռացության են տրվել: Ստրաբոնը այդ հաղորդման սկզբում գրում է՝ «Պատմում են»: Դա նշանակում է, թե պատմիչը հավատ չի ընծայել այդ տեղեկությանը: Սակայն նա իր անունից գրում է, որ Արմենիայից Իբերիա (Վրաստան) կարելի է մտնել Կուրի և Արագոսի (այժմ՝ Արազվա) կիրճերով (39, էջ 57): Այսինքն՝ Հայաստանի և Վրաստանի սահմանը Կուր գետն է եղել:

Վերջին հարյուրամյակում հայոց հին պատմությունը հետազոտողների կողմից շատ է աղավաղվել: Վաղուց ժամանակն է այն նորովի քննելու և հնարավորինս ուղղելու տեղ գտած անճշտությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Deimel A., Sumerische Lexicon, Roma, 1930.
2. Kiepert H., Lehrbuch des alten Geographie, Berlin, 1878
3. Арутюнян Н.В., Биайнили, Ереван, 1971.
4. Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.
5. Арутюнян Н.В., Топонимика Урарту, Ереван, 1985.
6. Джаукян Г., Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964.
7. Дьяконов И., Ассирио-вавилонские источники по истории Урарту, Вестник древней истории, Москва, 1953, №1-4.
8. Дьяконов И., К предыстории армянского языка — Պատմա-րանսիրական հանդես, Երևան, 1983, № 4:
9. Дьяконов И., Предыстория армянского народа, Ереван, 1969.
10. Меликишвили Г., К истории древней Грузии, Тбилиси, 1959.
11. Меликишвили Г., Наири-Урарту, Тбилиси, 1954.
12. Струве В., Этюды по истории Северного причерноморья, Кавказа и Средней Азии, Ленинград, 1968.
13. Хазарадзе Н., К вопросу о локализации матиенов — Պատմա-րանսիրական հանդես, Երևան, 1973, № 2:
14. Хачатрян В.Н., Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971.
15. Աբելյան Մ., Երկեր, Ա., Երևան, 1966:
16. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն (թարգմանություն ֆրանսերենից), Երևան, 1968:
17. Ալիշան Ղ., Հայաստանը քան զինեղն Հայաստան, Վենետիկ, 1904:
18. Աղայան Է, Բառարանական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974:
19. Աճառյան Հ., Հայերենի արմատական բառարան, հ. 1, հ. 2, 1973, հ. 3, 1977, հ. 4, 1979:
20. Առաքելյան Բ., Ջահուկյան Գ., Մարգսյան Գ., Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988:
21. Երենյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963:
22. Խաչատրյան Վ.Ն., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան,

23. Խաչատրյան Վ.Ն., Ուրարտու պետության կազմավորումը, կորուցումը և կործանումը, Մերձավոր և Միջին արևելքի երկրները և ժողովուրդները, Երևան, 2005, XXVI:
24. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, հ. 1, 1986, հ. 2, 1988, հ. 3, 1991, հ. 4, 1998, հ. 5, 2001:
25. Հայ ժողովրդի պատմություն (բազմահատորյակ), Երևան, հ. 1, 1971:
26. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, հ. 1, 1981:
27. Հարությունյան Բ.Հ., Աբենենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ — Հանդես ամսօրյա, 1999, էջ 46-114:
28. Հարությունյան Բ.Հ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ, Երևան, 1998:
29. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (թրգմ. Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1986:
30. Հայերեն ձեռագիր հիշատակարաններ, ԺԵ դար, հ. Ա, Երևան, 1955:
31. Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, Երևան, 1977:
32. Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Տիփսիս, 1913:
33. Նալբանդյան Գ., Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, Երևան, 1964:
34. Չամչյան Մ., Պատմություն հայոց, Երևան, հ. 3, 1984:
35. Պատմություն Սեբեոսի, Երևան, 1979:
36. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, մախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
37. Ջահուկյան Գ., Հին հայերենի վերջածանցների ծագումը, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Երևան, 1998:
38. Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն, հրատ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1939:
39. Ստրաբոն, Աշխարհագրություն, թարգմ. Հ. Աճառյանի, Երևան, 1940:
40. Քոսյան Ա.Վ., Հայկական լեռնաշխարհի տեղանունները ըստ խեթական սեպագիր աղբյուրների, Երևան, 2004:
41. Քսենոֆոն, Անաբասիս (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1970:
42. Քսենոֆոն, Կյուրուպեդիա (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Երևան, 2000:

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀԱՅՈՑ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Ակնարկներ հայոց հին պատմության)

Խմբագիր՝ Մ. Ա. Աղաբեկյան
Նկարիչ՝ Գ. Վ. Մարիկյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Սրբագրիչ՝ Ն. Կ. Ղազարյան
Համակարգչային ձևավորումը՝ Օ. Ղ. Թերզյանի

Պատվեր՝ 5: Տպաքանակ՝ 300:
Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ
Երևան-9, Տերյան 91